***I. Սաների քաղաքացիական և բարոյական դաստիարակության ձևավորումը /քաղաքացիական պարտականության և արժանապատվության ձևավորումը/ հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ***

| N | Աշխատանքի բովանդակությունը | Պատասխանատու | Կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | Կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպում և ղեկավարում | տնօրենի տեղակալներ, ավագ և կազմակերպիչ մանկավարժներ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 2. | Սեմինարների կազմակերպում և անցկացում, միջոցառումների գործունեությունների վերահսկում | տնօրեն, տնօրենի տեղակալներ | ուստարվա ընթացքում | |
| | Ծնողական ժողովների անցկացում | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 3. | Բաց դասերի, գեղարվեստական միջոցառումների, ցուցահանդեսների, տոնակատարությունների կազմակերպում և անցկացում | տնօրենի տեղակալ, ավագ և կազմակեպիչ մանկավարժներ գեղ. մաս. վարիչ, կիր. արվ. համ., խմբավարներ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ***II. Ֆիզիկական առողջություն և դաստիարակություն*** | | | | |
| 1. | Սպորտային միջոցառումների, զրույցների կազմակերպում և անցկացում | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 2. | Սաների մասնակցության կազմակերպում միջազգային, հանրապետական և քաղաքային սպորտային մրցաշարերի | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 3. | Մասնահատուկ աշխատանքներ սահմանափակ կարողություններով սաների հետ | տնօրենի տեղակալ, ավագ մանկավարժներ, խմբավարներ | պարբերաբար | |
| 4. | Շախմատի մրցաշարերի կազմակերպում, մասնակցություն հանրապետական և քաղաքային մրցումներին | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| ***III . Աշխատանքային դաստիարակություն, կառուցողական հմտությունների զարգացում*** | | | | |
| 1. | Նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներ, խմբասենյակների մաքրում և կահավորում | տնտեսվար ավագ մանկավարժներ խմբավարներ | սեպտեմբեր | |
| 2. | Խմբասենյակում գույքի վերանորոգման աշխատանքներում սաների ընդգրկում | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 3. | Շաբաթօրյակների կազմակերպում և վերահսկում | տնօրենի տեղակալ, կազմակերպիչ մանկավարժ, խմբավարներ, տնտեսվար, հավաքարարներ | ուստարվա ընթացքում | |
| 4. | Զրույցների անցկացում աշխատասիրության, անկախության, նախաձեռնողականության, նպատակին հասնելու համառության, կազմակերպվածության թեմաներով | տնօրենի տեղակալներ, ավագ մանկավարժ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 5. | Բնական նյութերով աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպում | կիր. արվ. համակ., խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| ***IV. Իրավական դաստիարակություն, իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում*** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Սովորողներին ներքին կարգապահական և տեխնիկական անվտանգության կանոնների, իրավունքներին ու պարտականություններին ծանոթացում և դրանց կատարման վերահսկում | ավագ մանկավարժներ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 2. | «Երեխայի իրավունքներ» հռչակագրի ուսումնասիրում և քննարկում | ավագ մանկավարժներ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 3. | Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ‹‹Խաղաղությունը ժպիտից է սկսվում›› խորագրով միջոցառման կազմակերպում | ավագ մանկավարժներ, խմբավարներ | նոյեմբեր, մայիս | |
| 4. | Երեխաների և հաշմանդամների իրավունքների պաշպանության վերաբերյալ բազմաբնույթ միջոցառումների անցկացում | ավագ մանկավարժներ, գեղ. մաս. վարիչ, խմբավարներ | հունիս, դեկտեմբեր | |
| 5. | Հաշմանդամ, սոցիալապես անապահով և ծնողազուրկ սաների անվանացանկի կազմում, հանդիպումներ նրանց ծնողների հետ, ճշտել առողջական վիճակները, հնարավորության դեպքում տրամադրել անհրաժեշտ օգնություն | տնօրինություն, ավագ մանկավարժներ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 6. | Նոր ընդունված սաներին և նրանց Օրինական Ներկայացուցչին կենտրոնի կանոնադրությանը, առօրյային և ուսումնադաստիարակչական ծրագրերի ծանոթացում | տնօրենի տեղակալ, ավագ մանկավարժ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 7. | Ավագ և կազմակերպիչ մանկավարժների, խմբավարների հետ խորհրդակցությունների, մտքերի փոխանակության կազմակերպում | տնօրինություն | ուստարվա ընթացքում | |

***V. Էկոլոգիական դաստիարակություն. բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում***

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Կլոր սեղանի կազմակերպում | ավագ և կազմակերպիչ մանկավարժներ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 2. | Էքսկուրսիաների, արշավների, ճանաչողական այցերի կազմակերպում | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 3. | Բնության պահպանություն թեմայով զրույցների անցկացում | խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 4. | Շաբաթօրյակների, ծառատունկի կազմակերպում և անցկացում | տնօրինություն, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |

***VI . Գեղագիտական մշակույթ կրող ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում***

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Տարաբնույթ միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպում նվիրված նշանավոր անձանց տարելիցներին հիշարժան օրերին | ավագ և կազմակերպիչ մանկավարժներ, գեղ.մաս. վարիչ., խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 2. | Ֆիլմերի դիտումներ | տեխնիկ, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 3. | Ազգային և հոգևոր տոներին նվիրված միջոցառումների կազմակերպում | տնօրենի տեղակալներ, գեղ.մաս. վարիչ., խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 4. | Պատի թերթերի լուսընծայում, ձևավորում, միջոցառումների լուսաբանում | գեղ.մաս. վարիչ., խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 5. | Միջազգային, հանրապետական և քաղաքային նկարչական մրցույթների մասնակցության կազմակերպում | կիր. արվ. համակ., խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 6. | Ներքին ռադիոցանցով ծննդյան տոների շնորհավորանքների և ռադիոհաղորդումներ կազմակերպում | գեղ.մաս. վարիչ., խմբավարներ | ուստարվա ընթացքում | |

## ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Պատասխանատու | Կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | Հաստիքացուցակի, տարիֆիկացիայի, ծախսերի նախահաշիվի, գնումների պլանի կազմում, քննարկում մանկավարժական խորհրդում և վերադասին ներկայացում | տնօրեն, տնօրենի տեղակալ, հաշվապահ | ուստարվա ընթացքում 2 անգամ | |
| 2. | Գնումների գործընթացի կազմակերպում և համակարգում | գնումների համակարգող | ուստարվա ընթացքում | |
| 3. | Ֆինանսատնտեսական գործունեության կարգավորում պետական լիազոր մարմնի հետ | տնօրեն | ուստարվա ընթացքում | |
| 4. | Կենտրոնի գույքի, սարքավորումների, ուսումնական, տեխնիկական միջոցների և այլ պարագաների պահպանման և շահագործման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում | տնօրենի տեղակալ, տնտեսվար | ուստարվա ընթացքում | |
| 5. | Կենտրոնի հաշվեկշռում եղած գույքի և սարքավորումների հաշվառում | Հաշվապահ, տնտեսվար | | |
| 6. | Շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմի ապահովում: Հակահրդեհային միջոցների կանոնավոր վիճակի պահպանում | տնտեսվար | ուստարվա ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | Խմբասենյակների գույքի ու սարքավորումների արդյունավետ օգտագործման ուղղությամբ աշխատանքների վերահսկում | տնտեսվար, խմբավարներ | ուստարվա ընթացքում | |
| 8. | Բարեկարգ վիճակում պահել կենտրոնի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը | տնտեսվար | ուստարվա ընթացքում | |
| 9. | Սպասարկվող բանկի հետ իրականացվող գործընթացների կանանակարգում | տնօրեն, հաշվապահ | ուստարվա ընթացքում | |

## 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

**1. «Ամեն մի հայ Հայաստան է» խորագրով Հայոց բանակի կազմավորման 33 ամյակին և արցախյան 44 –օրյա պատերազմի հերոսների հիշատակին նվիրված սեմինար-միջոցառում**

**Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Հայոց բանակի կազմավորման պատմության մասին տեղեկությունների ներկայացում
- Հայրենասիրական, ռազմերգերի, պարերգերի և սպորտային ելույթների ընտրություն
- «Երեք տասնամյակում երեք պատերազմով անցած զինված ուժերի պատմական ուղին» խորագրով սեմինարի բախոսների ընտրություն
- Բեմի ձևավորում, փորձերի անցկացում, անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսի և շնորհակալագրի պատրաստում

*Անցկացում*

- Հայաստանի Հանրապետության դրոշի մուտք՝ օրհներգի ներքո փողային նվագախմբի կատարմամբ
- Մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք հանուն հայրենիքի կյանքը նվիրաբերած հայորդիների հիշատակին
- «Երեք տասնամյակում երեք պատերազմով անցած զինված ուժերի պատմական ուղին» խորագրով սեմինար՝ Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման, զինվորի ներկայիս բարոյական կերպարի ձևավորման, ժամանակակից հասարակության մեջ բանակի դերի բարձրացման թեմաների շուրջ
- «Ամեն մի հայ Հայաստան է» խորագրով գեղարվեստական միջոցառում՝ հայոց բանակին նվիրված երգերի, ռազմահայրենասիրական պարերգերի ստեղծման պատմության ներկայացում, գեղարվեստական և սպորտային ելույթների կատարումներ
- Շնորհակալագրի հանձնում
- Ելույթի խոսքեր
- Եռագույնի դուրս բերում՝ օրհներգի ներքո փողային նվագախմբի կատարմամբ

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում:

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Արժևորել Հայոց բանակի դերը՝ որպես պետականության և անկախության պահպանման երաշխիք
- Նպաստել դեռահասների հայրենասիրական դաստիարակությանը
- Կրթել հայրենիքի անվտանգության և պաշտպանության գործին նվիրյալ դեռահասներ
- Ծանոթացնել հայ անվանի զորահրամանատարների գործունեությանը և հերոսների սխրանքներին
- Ներկայացնել հայկական բանակի ստեղծման նախադրյալները, աղբյուրները
- Արժևորել կյանքը հայրենիքին նվիրաբերած հերոսների անուրանալի սխրանքը

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Հայրենիքի անվտանգության և պաշտպանության գործին նվիրյալ դեռահասներ
- Ռազմահայրենասիրական մղումներով դաստիարակված երիտասարդներ
- Քաջարի զինվորների սխրանքը հայրենիքի ազատության ու պահպանման գործում արժևորած սաներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի ազգագրական երգ ու պարի, փողային նվագախմբի, կիթառի, պարարվեստի, երաժշտարվեստի խմբակների սաներ՝ 80
- Զինված ուժերի ներկայացուցիչներ, պատմաբաններ, ուսանողներ, դասախոսներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 150

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

**Իրականացման ժամկետը**

- Հունվար

**2. Արցախյան 44-օրյա պատերազմի հերոսների հիշատակին նվիրված «Հայրենիքին քո ուժը տուր» խորագրով ցուցահանդես**

**Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաները կծանոթանան արցախյան 44-օրյա պատերազմում իրենց կյանքը հայրենիքին զոհած հերոսների կյանքին, նրանց սխրանքներին, պատերազմում վիրավորում ստացած հայորդիների հերոսական պատումներին
- «Հավերժ ներկաները» խորագրով գեղանկարչական աշխատանքների էսքիզավորում, մշակում
- Հայրենասիրական երգերի, լավագույն աշխատանքների ընտրություն, վերջնամշակում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք արցախյան երեք պատերազմներում զոհված հերոսների հիշատակին
- «Հավերժ ներկաները» խորագրով ցուցահանդեսի բացում
- 44-օրյա պատերազմի մասնակից, գեղանկարչության խմբակի ղեկավար՝ Բենիամին Պողոսյանի հերոսական ուղու, և իր զինակից անմահացած ընկերների պատումների ներկայացում
- Գեղարվեստական ելույթներ
- Հարգանքի տուրք, խնկարկում արվեստագետի «Հավերժ ներկաները» հերոս հայորդիների դիմանկարների շարքի առաջ
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում:

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Դասեր քաղել թշնամու հանկարծակի հարձակումից և ճանաչել մերօրյա հերոսներին, հասկանալ համախմբման գաղափարը
- Արժևորել հայկական բանակի դերը հայոց պետականության և անկախության պահպանման գործում մեծ ավանդ ունեցող զինվորականների ուղին
- Ծանոթացնել Արցախյան ազատամարտում մեծ ներդրում ունեցող ռազմական գործիչների գործունեությանը
- Արժևորել կյանքը հայրենիքին նվիրաբերած հերոսների անուրանալի սխրանքը, քաջարի զինվորների նվիրումը հայրենիքի ազատության ու սահմանային պահպանման գործում

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Հայրենիքի անվտանգության և պաշտպանության գործին նվիրյալ դեռահասներ
- Ռազմահայրենասիրական մղումներով դաստիարակված երիտասարդներ
- Քաջարի զինվորների սխրանքը հայրենիքի ազատության ու պահպանման գործում արժևորած սաներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի գեղանկարչության, կավագործության, պարարվեստի, երաժշտարվեստի խմբակների սաներ՝ 50 սան
- Արվեստագետներ, մանկավարժներ, ծնողներ, սաներ՝ 80

**Իրականացման վայրը**

- Գյումրու «BenArt» արվեստանոց

***Համագործակցող կազմակերպություններ***

- Գյումրու «BenArt» արվեստանոց

**Իրականացման ժամկետը**

- Հունվար

### 3. «Գրականության և արվեստի միաձուլում» խորագրով ցուցահանդես-միջոցառում

**Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանքներ*

*Սաներին կհանձնարարվեն՝*

- Օգտվել գրադարանից. Ընթերցել Ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի, ժամանակակից գրողներ՝ Հակոբ Մուշի, Անդրանիկ Կարապետյանի, Շնորհիկ Շահինյանի, Ռոբերտ Եսայանի, Հովիկ Կարապետյանի գրական ստեղծագործությունները
- Ընթերցած ստեղծագործությունների հիման վրա մանրանկարչական նախապատկերների, վերոնշյալ հեղինակների գրական հերոսների վերարտադրման աշխատանքների կատարում
- Լավագույն աշխատանքների ընտրություն, վերջնամշակում
- Շիրակի մարզային գրադարանի հետ համագործակցության ձեռք բերում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Գրականության և արվեստի միաձուլում» խորագրով ցուցահանդեսի բացում

- Ասմունքներ և ընթերցանություն այն ստեղծագործությունները, որոնք վրձնել են սաները
- Ցուցահանդես, ասմունքի ցերեկույթ Շիրակի մարզային գրադարանում
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Ուսումնասիրել հայ միջնադարյան մանրանկարչության վարպետների ստեղծագործությունների կառուցման ձևը և կատարողական ոճը
- Ծանոթացնել Ամենայն հայոց բանաստեղծի և ժամանակակից գրողների ստեղծագործություններին
- Ստեղծել նոր մանրանկարչական ոճի աշխատանքներ գրական թեմայով
- Պահպանել և զարգացնել միջնադարյան մանրանկարչության արվեստը
- Սաների մոտ ձևավորել ցուցահանդեսներ կազմակերպելու, գրադարանից օգտվելու մշակույթ
- Վերականգնել վերաբերմունքը գրքի և ընթերցանության հանդեպ
- Ձևավորել նվիրական վերաբերմունք գրքի՝ որպես հանրօգուտ, համամարդկային և մնայուն արժեքի

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Հայ միջնադարյան մանրանկարները գրական ժանրում ստեղծագործած սաներ
- Ազգային մշակույթի արժատներին և պատմությանը ծանոթացած դեռահասներ
- Հայ միջնադարյան մանրանկարչության արվեստով հետաքրքրված պատանիներ
- Ամենայն հայոց բանաստեղծի գրական ժառանգությունն արժևորած և գնահատած սաներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի մանրանկարչության, ստեղծագործական լրագրության խմբակների սաներ՝ 50
- Գրադարանավարներ, կենտրոնի մանկավարժներ, սաներ՝ 100

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» կենտրոն, Շիրակի մարզային գրադարան

**Համագործակցող հաստատություն**

- Շիրակի մարզային գրադարան, ՀՀ գրողների միության Շիրակի մարզային բաժանմունք

**Իրականացման ժամկետը**

- Փետրվար

### 4. Ռադիոյի միջազգային օրվան նվիրված՝ «Մեդիան և մարդիկ» խորագրով ռադիոհաղորդման ուղիղ եթերի մասնակցություն

**Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կներկայացվեն՝
  - ✓ ի՞նչ է ռադիոն, ստեղծման պատմությունը, զարգացման փուլերը մինչև մեր օրեր,
  - ✓ ի՞նչ է ռադիոլուրը, ինչպե՞ս ճիշտ գրել ռադիոլուր, ո՞րն է հեռուստալուրի և ռադիոլուրի տարբերությունը
  - ✓ ինչպե՞ս վարել ռադիոհաղորդում /նաև ուղիղ եթերում/
  - ✓ հրատապ տեղեկատվությունը լսարանին հասցնելու առաջին արագ ճանապարհի՝ ռադիոյի նորօրյա մարտահրավերները

- ✓ ռադիոն ժամանցային և տեղեկատվական հաղորդումների հարթակ
- Հեռուստառադիոընկերության հետ պայմանավորվածության ձեռք բերում
- Քննարկել ռադիոլուրերի թողարկումների, ռադիոհաղորդումների օրակարգը, ծանոթանալ լրահոսին
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Շնորհակալագրերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Մեդիան և մարդիկ» թեմայով քննարկում լրագրողների հետ Ռադիո Մարիամ մշակութային հիմնադրամ Գյումրու մասնաճյուղ
- Ռադիոհաղորդման ուղիղ եթերի մասնակցություն
- Շնորհակալագրերի հանձնում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում, լրատվամիջոցների պաշտոնական կայքերում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Օբյեկտիվ և գրագետ ներկայացնել մեդիայի ասելիքը
- Օգնել սաներին հասկանալ լրատվամիջոցների աշխատանքը, շարժառիթները
- Օժանդակել սաներին քարոզչությունը տարբերել օբյեկտիվ տեղեկատվությունից, խուսափել մեդիայի բացասական ազդեցություններից
- Արժևորել կարևոր տեղեկատվությունը
- Ձևավորել մեդիագրագիտության հիմքում գրագետ մտածողության սկզբունքները
- Ամրապնդել մեդիադաշտում գործնական քայլեր կատարելու հմտությունները

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Մեդիայի ասելիքը ճիշտ ըմբռնած սաներ
- Լրատվամիջոցների աշխատանքի հմտություններին, գաղտնիքներին ծանոթացած դեռահասներ
- Քարոզչությունը օբյեկտիվ տեղեկատվությունից տարբերած սաներ
- Ապատեղեկությունը՝ անաչառ լուրից տարանջատած, հավաստի աղբյուրներից օգտվող դեռահասներ
- Մեդիադաշտում գործնական քայլեր կատարած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի մեդիագրագիտության, ստեղծագործական լրագրության, բարեկրթություն և խոսքի վարպետության խմբակների սաներ՝ 30
- Ռադիոլրագրողներ, ձայնային օպերատորներ, եթերի թողարկիչներ՝ 30

***Իրականացման վայրը***

- Ռադիո Մարիամ մշակութային հիմնադրամ Գյումրու մասնաճյուղ

***Համագործակցող հասպապություն***

- Ռադիո Մարիամ մշակութային հիմնադրամ Գյումրու մասնաճյուղ

***Իրականացման ժամկետը***

- Փետրվար

**5. «Ոճաբան, վարսահարդարի հաջողության գաղտնիքը» խորագրով վարպետաց դաս**

***Ծրագրի նկարագիր, անցկացում, ամփոփում***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին գործնական պարապմունքներին կփոխանցվեն՝ հասարակության հետ շփման, վարվեցողության, գործատուի հետ հաղորդակցման հմտություններ
- Կներկայացվեն աշխատաշուկայում՝ կրթության կարևորությունը, պահանջված մասնագետ կայանալու սկզբունքները
- Տեղեկատվության տրամադրում ոճաբան, վարսահարդար, «ԱՐՏ» գեղեցկության սրահի տնօրեն Արտակ Մելիքյանի գործունեության մասին
- «ԱՐՏ» գեղեցկության սրահի հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «ԱՐՏ» գեղեցկության սրահում՝ «Ոճաբան, վարսահարդարի հաջողության գաղտնիքը» թեմայով զրույց-քննարկում
- Արտակ Մելիքյանը կներկայացնի աշխատաշուկայում երկարամյա գործունեություն ծավալող սրահի կայացման, հաստատման, ոլորտում դիրքերի ամրապնդման կարևոր սկզբունքները
- Վարպետաց դասի, գործնական աշխատանքների անցկացում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում:
- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Զարգացնել հաղորդակցման հմտությունները, ապրումակցելու կարողությունը
- Երիտասարդների շրջանում գործազրկության հաղթահարում
- Պատրաստել ապագա մասնագետներ աշխատաշուկա մուտք գործելու
- Ծանոթացնել աշխատաշուկայի առաջարկ-պահանջարկին
- Զարգացնել ինքնաճանաչման, ինքնագնահատման և նախաձեռնողականության հմտություններ
- Ձևավորել թիմում աշխատելու, բանավեճերը խաղաղ կարգավորելու կարողություններ
- Օժանդակել բիզնես ծրագրեր գրելու հմտություններին, ստեղծագործական մտածողությանը
- Զարգացնել բանակցություններ վարելու հմտություններ
- Արժևորել արտադպրոցական կրթության դերը անձի զարգացման գործում, նպաստել մասնագիտական կողմնորոշմանը

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Ոճաբան, վարսահարդարի կարիերայի գործունեության սկզբունքներին ծանոթացած սաներ
- Աշխատաշուկայի առաջարկ-պահանջարկով, սպառման քաղաքականությունով հետաքրքրված պատանիներ
- Գործատուին ներկայանալու հմտություններ ձեռքբերած դեռահասներ
- Կրթական գիտելիքները աշխատաշուկայում լավագույնս ներդրած սաներ
- Մասնագիտական հարցում կողմնորոշված դեռահասներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի փափուկ հմտություններ, վարսավիրական արվեստի խմբակների սաներ՝ 30
- «ԱՐՏ» գեղեցկության սրահի աշխատակիցներ՝ 15

**Համագործակցող**

- «Արտակ Մելիքյան» ԱՁ

**Իրականացման վայրը**

«ԱՐՏ» գեղեցկության սրահ

**Իրականացման ժամկետը**

- Փետրվար

## 6. «Հանուն մշակութային երկխոսության» միջոցառումների շարք

**Միջոցառման իրականացման վայրը**՝ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու /ռուսական համայնք/, Արագածոտնու մարզի Ալագյազի /եզդիական համայնք/, Լոռու մարզի Ալավերդու /հունական համայնք/, Արարատի մարզ Վերին Դվինի /ասորական համայնք/-ների, և Ջավախքի՝ Նինոծմինդայի և Ախալքալաքի կրթամշակութային հաստատություններ, Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի եզդիական մշակութային և Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրներ:

**Միջոցառման սկիզբը**՝ մարտ, 2025թ.
**Միջոցառման ավարտը**՝ հունիս, 2025թ.

**Միջոցառման համառոտ նկարագրությունը**

*1-ին փուլ.*

- ***Սեմինար, հանդիպում-քննարկումներ.*** «Էթնոգույներ. Ազգային մշակույթներ, սովորույթներ, ավանդույթներ» թեմայով Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների՝ եզդիների, ռուսների, ասորիների, հույների, կենտրոնի դեռահասների, մանկավարժների համար՝ «Ընտանիք» կենտրոնում
- ***Բաց դասեր.*** «Հայաստանի փոքր գույները» թեմայով՝ կենտրոնի անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի, մեդիագրագիտության, ստեղծագործական լրագրության խմբակների սաներ՝ «Ընտանիք» կենտրոնում
- ***Ազգային փոքրամասնությունների մշակույթին բնորոշ ստեղծագործական աշխատանքների կատարում.*** Կենտրոնի և Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունների, համայնքների սաների մասնակցությամբ:

*2-րդ փուլ.*

- ***Համատեղ գեղարվեստական ելույթներ, ֆլեշմոբեր, ցուցահանդես «Ազգային ինքնություն» խորագրով.*** ՀՀ Շիրակի մարզի Գյումրու /ռուսական համայնք/, Արագածոտնու մարզի Ալագյազի /եզդիական համայնք/, Լոռու մարզի Ալավերդու /հունական համայնք/, Արարատի մարզ Վերին Դվինի /ասորական համայնք/-ներում և Ջավախքի՝ Նինոծմինդայի և Ախալքալաքի կրթամշակութային հաստատություններում:

*3-րդ փուլ.*

- **Փառատոն.** «Խաղաղությունն է կերտում երկխոսության մշակույթ» խորագրով՝ տաղավարների ներկայացում /ազգային մշակույթ, խոհանոց/, գեղարվեստական ելույթներ մասնակցությամբ կենտրոնի և Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունների, Արցախից բռնի տեղահանված, Ջավախքի՝ Նինոծմինդայի և Ախալքալաքի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների, սաների մասնակցությամբ՝ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնում:
- **Ծրագրի ամփոփում.** Շնորհակալագրերի, պատվոգրերի և մրցանակների հանձնում:

*Եզրափակիչ փուլ.*

- ***Ճանաչողական այց.*** Ծրագրի ակտիվ մասնակիցների՝ Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի եզդիական մշակութային և Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրներ:

***Միջոցառումների նպատակը, խնդիրները***՝ ձևավորել հանդուրժողականություն, համերաշխություն, միասնականություն և հարգալից վերաբերմունք ազգային փոքրամասնությունների նկատմամբ, բարձրացնել արտադպրոցական կրթության դերը: Բացահայտել մեր կողքին ապրող ազգային փոքրամասնությունների սովորույթները, ավանդույթները՝ նպաստելով հայաստանյան մշակույթի բազմազանության զագացմանը: Զարգացնել դեռահասների, պատանիների մշակութային ճանաչողությունը՝ արժևորելով տարբեր ազգերի ինքնությունը: Խթանել ազգային փոքրամասնությունների ակտիվ մասնակցությունը Հայաստանի կրթական, միջմշակութային արժեքների պահպանմանը, հանրահռչակմանը նպաստող ծրագրերում: Ապահովել հանրապետության համայնքների դեռահասների համար կրթամշակութային ծրագրերի մատչելիություն և հասանելիություն: Աշխուժացնել համայնքներում մշակութային կյանքը, դեռահասների շրջանում ստեղծել ազգային արվեստների, արհեստների նկատմամբ

հետաքրքրություն: Հաղորդակցվել, գնահատել և արժևորել ազգային, համամարդկային արժեքների դերն ու նշանակությունը ազգապահպանության գործում:

## Միջոցառման նկարագրությունը

- *Միջոցառման հիմնավորումը՝ միջոցառման իրականացման անհրաժեշտությունը.*
  Ծանոթանալով Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների արվեստի, արհեստի, խոհանոցի, կենցաղի և մշակութային առանձնահատկություններին, կձևավորվի բազմամշակութային արժեքների նկատմամբ հարգանք, ինչը կխթանի Արցախից բռնի տեղահանված, ինչպես նաև տարբեր ազգերի միջև համագործակցությանը, համախմբվածությանը, բարեկամական կապերի ամրապնդմանը: Ծրագիրը կհամախմբի հանրապետության մարզերի հանրակրթական դպրոցների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, մանկավարժների, դեռահասների, որոնք կընդգրկվեն մշակութային միջոցառումներում՝ նպաստելով ազգային մշակույթների պահպանմանն ու հանրայնացմանը: Բազմամշակութային հասարակության զարգացման հիմքերի ստեղծմամբ՝ ինտեգրելով ազգային փոքրամասնությունների մշակույթն ու լեզուն՝ խաղաղության ուղերձ կբարձրացվի հանուն միասնականության, հանուն զարգացող երկրի ապագայի: Ազգային արժեհամակարգի ճիշտ ձևավորումը կհանգեցնի քաղաքացիական գրագետ ինքնագիտակցության բարձրացմանը: Միջմշակութային երկխոսությունը կարևոր հիմնասյուն է, համայնքներում արտադպրոցական կրթության ապահովման համաչափ կայուն զարգացման գործում: Սեմինարների, բաց դասերի, հանդիպում-քննարկումների արդյունքում պատանիների ստեղծագործական ներուժի լիարժեք գործադրումն ու ստացած գիտելիքները արվեստի և արհեստի ոլորտներում, կապահովի ծրագրի շարունակականությունը:
- *Ծրագրի նպատակներն ու խնդիրները.*

✓ Ծանոթացնել ազգային տարբեր սովորույթներին, ավանդույթներին և ձևավորել հարգանք դրանց պահպանման և տարածման նկատմամբ,
✓ Ամրապնդել Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների բարեկամական կապը, ստեղծել համերաշխության և հանդուրժողականության մթնոլորտ,
✓ Խթանել մշակույթների բազմազանության նկատմամբ հետաքրքրություն, բացահայտել ազգային արժեքները,
✓ Կարևորել արտադպրոցական կրթության դերը մասնակից պատանիների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում,
✓ Բարձրացնել դեռահասների, պատանիների գեղագիտական ճաշակը, քաղաքացիական գիտակցությունը,
✓ Օժանդակել Արցախից բռնի տեղահանված, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների դեռահասների, պատանիների լիարժեք ինքնադրսևորմանը,

## Միջոցառման կառուցվածքը

- *Միջոցառման իրականացման համար նախատեսված աշխատանքները՝ նախապատրաստում, իրականացում և արդյունքների ամփոփում.*

Նախապատրաստում՝ համագործակցող կազմակերպությունների, սեմինարավարի, բանախոսների, տրանսպորտային ծառայության հետ պայմանավորվածության, միջոցառումների համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերում, մասնակիցների ընտրություն, գործուղման կազմակերպում, ժամանակացույցի, անցկացման կարգի, հրավերների պատրաստում և ծանուցում, փառատոնի, գեղարվեստական ելույթների և ցուցահանդեսի ընթացակարգերի մշակում:
Հարցախույզ թերթիկների, նկարահանող և տեսաֆիլմ պատրաստող կազմակերպության ընտրություն, ծրագրի վերաբերյալ տեղեկատուի և տեսանյութի պատրաստում:
*Իրականացում՝*
***1-ին փուլ.***

- ***Սեմինար, հանդիպում-քննարկումներ.*** «Էթնոգույներ. Ազգային մշակույթներ, սովորույթներ, ավանդույթներ» թեմայով Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների՝ եզդիների, ռուսների, ասորիների, հույների, կենտրոնի դեռահասների, մանկավարժների համար՝ «Ընտանիք» կենտրոնում

- ***Բաց դասեր.*** «Հայաստանի փոքր գույները» թեմայով՝ կենտրոնի անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի, մեդիագրագիտության, ստեղծագործական լրագրության խմբակների սաներ՝ «Ընտանիք» կենտրոնում
- ***Ազգային փոքրամասնությունների մշակույթին բնորոշ ստեղծագործական աշխատանքների կատարում.*** Կենտրոնի և Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունների, համայնքների սաների մասնակցությամբ:

***2-րդ փուլ.***

- ***Համատեղ գեղարվեստական ելույթներ, ֆլեշմոբեր, ցուցահանդես «Ազգային ինքնություն» խորագրով.*** ՀՀ Շիրակի մարզի Գյումրու /ռուսական համայնք/, Արագածոտնու մարզի Ալագյազի /եզդիական համայնք/, Լոռու մարզի Ալավերդու /հունական համայնք/, Արարատի մարզ Վերին Դվինի /ասորական համայնք/-ներում և Ջավախքի կրթամշակութային հաստատություններում:

***3-րդ փուլ.***

- ***Փառատոն.*** «Խաղաղությունն է կերտում երկխոսության մշակույթ» խորագրով՝ տաղավարների ներկայացում /ազգային մշակույթ, խոհանոց/, գեղարվեստական ելույթներ մասնակցությամբ կենտրոնի և Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունների, Արցախից բռնի տեղահանված, Ջավախքի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների, սաների մասնակցությամբ՝ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնում:
- ***Ծրագրի ամփոփում.*** Շնորհակալագրերի, պատվոգրերի և մրցանակների հանձնում:

***Եզրափակիչ փուլ.***

- ***Ճանաչողական այց.*** Ծրագրի ակտիվ մասնակիցների՝ Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի եզդիական մշակութային և Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրներ:

***Արդյունքների ամփոփում***՝ համագործակցող կազմակերպություններին, մասնակից դեռահասներին շնորհակալագրերի, պատվոգրերի հանձնում: Ծրագրի վերաբերյալ հարցաթերթիկների լրացում: Արձագանքների հիման վրա վերլուծության կազմակերպում: Տեսանյութի և տեղեկատուի պատրաստում, հաշվետվության կազմում:

- *Գործողությունների ծրագրերը, գործողությունների ժամանակացույցը.*

| Հ/հ | Գործողությունների ծրագիրը | Գործողությունների ժամանակացույցը |
|---|---|---|
| 1. | Համագործակցող կազմակերպությունների, սեմինարավարի, բանախոսների, տրանսպորտային ծառայության հետ պայմանավորվածության, մասնակիցների ընտրություն, գործուղման կազմակերպում, ժամանակացույցի, անցկացման կարգի, հրավերների պատրաստում և ծանուցում, փառատոնի, գեղարվեստական ելույթների և ցուցահանդեսի ընթացակարգերի մշակում | մարտ |
| 2. | Առաջին և երկրորդ փուլերի համար անհրաժեշտ նյութերի, պարագաների ձեռք բերում | |
| 3. | Ազգային փոքրամասնությունների մշակույթին բնորոշ ստեղծագործական աշխատանքների պատրաստում | |
| 4. | 1-ին փուլ. Սեմինար, հանդիպում-քննարկումներ, բաց դասերի անցկացում | ապրիլ |
| 5. | 2-րդ փուլ. Համատեղ գեղարվեստական ելույթներ, ֆլեշմոբեր, ցուցահանդեսի կազմակերպում | ապրիլ-մայիս |
| 6. | Փառատոնի և եզրափակիչ փուլի համար անհրաժեշտ նյութերի, պարագաների ձեռք բերում | |
| 7. | Փառատոնի անցկացում, ճանաչողական այցի կազմակերպում | |
| 8. | Տեսանյութի, տեղեկատուի և հաշվետվության պատրաստում | հունիս |

## Ազդեցությունը և շարունակականությունը

Ազգային փոքրամասնությունների և ծրագրի մասնակիցների միջև ձևավորվում է միջմշակութային երկխոսություն, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվում ծանոթանալու, գնահատելու և արժևորելու միմյանց մշակութային արժեքները: Արտադպրոցական կրթության համաչափ ներդրումը նպաստում է ազգային արհեստի ու արվեստի տարածմանն ու պահպանման: Մասնակցելով սեմինարի, բաց դասերի,

հանդիպում-քննարկումների՝ մասնակիցները տեղեկանում են նախ արտադպրոցական կրթության կազմակերպմանը, այնուհետև Հայաստանում ապաստանած տարբեր ազգերի մշակույթին: Ազգային փոքրամասնության դեռահասները հաղորդակից են դառնում հայաստանյան մշակութային բազմազանության առանձնահատկություններին, հին արվեստներին ու արհեստներին: Համայնքների, ազգային փոքրամասնությունների միջև ամրապնդվում է համագործակցությունը, ընկերական և բարեկամական կապերը:
Ծրագրի ազդեցության շարունակականության և կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում պայմանավորված է մշտապես համատեղ միջոցառումների կազմակերպմամբ, փորձի փոխանակմամբ և գործընկեր կազմակերպությունների, համայնքային իշխանությունների, ծնողական խորհուրդների հետ համագործակցության ընդլայնմամբ:

**Տեսանելիությունը**

Միջոցառումների տեսանելիության լուսաբանում՝ կրթական կայքէջերում, «Կրթություն» շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ների հաղորդաշարերում: Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական տեսանյութի, տեղեկատուի պատրաստում և տրամադրում նաև համագործակցող կազմակերպություններին: Տեսանյութը տեղադրվում է entanik.am, YouTube կայքէջերում, facebook սոցիալական կայքում:

**Համագործակցություն միջոցառման շրջանակներում**

Միջոցառման շրջանակներում համագործակցող կազմակերպություններն են՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու /ռուսական համայնք/, Արագածոտնու մարզի Ալագյազի /եզդիական համայնք/, Լոռու մարզի Ալավերդու /հունական համայնք/, Արարատի մարզ Վերին Դվինի /ասորական համայնք/-ները և Ջավախքի՝ Նինոծմինդայի և Ախալքալաքի կրթամշակութային հաստատությունները, «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը:
Ծրագրի իրականացման գործում համագործակցող կազմակերպություններն ապահովում են սաների և մանկավարժների մասնակցությունը սեմինարի, բաց դասերի, հանդիպում-քննարկումներին, համատեղ միջոցառումներին: Համայնքները տրամադրում են դասասենյակներ և անհրաժեշտ այլ տարածքներ:
Հաստատությունների հետ համագործակցության արդյունավետության վկայությունն է համայնքի և ծնողական խորհուրդների կողմից գրավոր խնդրանք-առաջարկների, համագործակցության հուշագրերի, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում իրականացրած համանման ծրագրի արդյունքների դրական արձագանքների առկայությունը:

**Միջոցառման մասնակիցները**

- *Միջոցառման մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1110*
  - ✓ Սեմինար, բաց դասեր, հանդիպում-քննարկումների մասնակիցներ՝ «Ընտանիք» կենտրոնի սաներ և մանկավարժներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ 240
  - ✓ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու ռուսական համայնք՝ 120
  - ✓ ՀՀ Արագածոտնու մարզի Ալագյազի եզդիական համայնք՝ 130
  - ✓ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու հունական համայնք 90
  - ✓ ՀՀ Արարատի մարզ Վերին Դվինի ասորական համայնք՝ 140
  - ✓ Ջավախքի կրթամշակութային հաստատություններ՝ 120
  - ✓ «Ընտանիք» կենտրոնի սաներ և մանկավարժներ՝ 270,
- *Միջոցառման մասնակիցների նկարագրությունը և ընտրության կարգը.*
  - ✓ «Ընտանիք» կենտրոնի տարբեր միջազգային, հանրապետական, մարզային մրցույթներին մասնակցած, արդյունքներ գրանցած, շնորհալի, մասնագիտական գիտելիքներին ու հմտություններին տիրապետած սաներ, մանկավարժներ:
  - ✓ Բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքների կրթամշակութային հաստատությունների մանկավարժներ և աշակերտներ: Ամփոփիչ փուլի մասնակիցների ընտրությունը կատարվում է միջոցառումների ակտիվ մասնակցության փաստով և տվյալ հաստատության տնօրենության առաջարկով:

**7. «Արդի մասնագիտություն՝ ռոբոտաշինություն» խորագրով ցուցադրություն**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին տեղեկություններ կհաղորդվեն՝ կրթության, արտադրության և այլ ոլորտներում՝ ռոբոտաշինության, ժամանակակից կոմունիկացիոն ցանցի կիրառման կարևորության մասին
- Գիտելիքներ կփոխանցվեն արհեստական բանականության հնարավորությունների և հիմնախնդիրների վերաբերյալ
- Արհեստական բանականությամբ նոր սարքավորումների մոդելավորում
- Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի մասնագետների հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Կենտրոնի ցուցասրահում սաները կներկայացնեն ոլորտում իրենց ստեղծած սարքավորումները, դրանց հնարքները, հնարավորություններն ու կիրառության անհրաժեշտությունը արդյունաբերության մեջ, կենցաղում և այլ ոլորտներում
- Կներկայացնեն ի՞նչ նորարարություններ են սպասվում տարբեր ոլորտներում, ի՞նչ փոփոխություններ կլինեն մարդկային հարաբերություններում, ու նույնիսկ երեխաների դաստիարակության գործում
- Արհեստական բանականության վերաբերյալ զրույց Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի մասնագետների մասնակցությամբ
- Բանավոր երկխոսություն, ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Ծանոթացնել ռադիոկապի հիմունքներին, ռադիոդետալների տեսակների բազմազանությանը, արհեստական բանականության կարևորությանը
- Ձևավորել ռադիոէլեկտրոնային սարքավորումների հետ աշխատելու հմտություններ ու կարողություններ
- Կարևորել ռադիոէլեկտրոնիկայի դերը ժամանակակից գիտության մեջ
- Զարգացնել անհատական և խմբային աշխատելու կարողությունները

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Գծագրերից և պայմանական նշաններից ճիշտ օգտվելու հմտություններ ձեռք բերած սաներ
- Գործնական աշխատանքներում չափող սարքերի կիրառության փորձ ձեռք բերած սաներ
- Անվտանգության կանոններին տիրապետած պատանիներ
- Էլեկտրոնային սխեմաները յուրացրած դեռահասներ
- Ռոբոտաշինության ու կապի միջոցների ստեղծման պատմության և արդի ուղղությունների մասին մասնագիտական գիտելիքներ ստացած սաներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի ռադիոէլեկտրոնիկայի, արևային էներգիայի մոդելավորման խմբակների սաներ՝ 35
- Ծնողներ, մանկավարժներ, տարբեր խմբակների սաներ՝ 80

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» կենտրոն

**Համագործակցող հաստատություն**

- Գյումրու տեխնոլոգիական կենտրոն

**Իրականացման ժամկետը**

- Մարտ

## 8. «Ազգայինը նորաձև է» խորագրով ցուցադրություն

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- *Հագուստի մոդելավորման և վարսավիրական արվեստի խմբակների սաներին կներկայացվեն՝*
  - ✓ ազգային տարազների, հագուստների, համահունչ սանրվածքների առանձնահատկությունները, նորաձևության պահանջներն ու ազգային դիմագծի պահպանման կարևորությունը
  - ✓ հագուստի մոդելավորման խմբակի սաները կկատարեն ազգային հագուստների էսքիզներ, խորհրդանշական նախշերով
  - ✓ կընտրվեն ոճային հագուստներին համապատասխան կտորներ
  - ✓ վարսավիրական արվեստի խմբակի սաները կկատարեն սանրվածքների ընտրություն հաճախորդի դիմագծերին ներդաշնակ, նորաձևությանը համապատասխան կտրվածքներով և մազափնջերով
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Սաները կցուցադրեն ոճային ձևաձքներով հագուստներ, ազգային տարազներ՝ կատարված համահունչ սանրվածքներով, ձևերի համապատասխանելիությունը, կատարման տեխնիկան
- Յուրաքանչյուր սանրվածք, զգեստ ցուցադրելիս սաները կխոսեն դրանց ազգային մշակութային ուղղվածության, պահպանության և կիրառության կարևորության մասին
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Սովորեցնել կանացի նոր կտրվածքներ, սանրվածքներ համահունչ ազգային տարազներին, հագուստներին
- Մշակույթը նորաձև դարձնելու և ներկայացնելու փորձի ձեռք բերում
- Ընդգծել տարազի գեղեցկությունը և կիրառելիությունը նորաձևությունում, հետաքրքրություն առաջացնել ազգայինը կիրառելու գաղափարով
- Ներկայացնել մազերի տարբեր տեսակի կտրվածքների բարդությունները
- Սովորեցնել ճիշտ ընտրել հաճախորդի դեմքին, հագուստին համապատասխան կտրվածք, սանրվածք
- Զարգացնել սաների մասնագիտական հմտությունները

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Մազերի սանրվածքների, կտրվածքների բարդություններն յուրացրած պատանիներ
- Նորաձև սանրվածքները, կտրվածքները գործնականում հմտորեն կիրառած դեռահասներ
- Գործնական աշխատանքները հանդիսատեսին ներկայացնելու հմտություններով օժտված սաներ

- Հայկական ազգային տարազը նորաձևության մեջ օգտագործելու նոր գաղափարներ ներկայացրած սաներ
- Ազգային ինքնությունը պահպանած պատանիներ
- Մասնագիտական հմտություններն ամրապնդած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի վարսավիրական արվեստի խմբակի, հագուստի մոդելավորման խմբակների սաներ՝ 40
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 60

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Մարտ

## 9. Պոեզիայի համաշխարհային օրվան նվիրված՝ «Ռուս-հայկական պոեզիան» խորագրով միջոցառում

**Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանքներ*

*Սաներին կուսուցանվեն՝*

- ✓ ռուս և հայ գրականագետների հայտնի ստեղծագործությունները
- ✓ ռուսերեն լեզվի ոճական, դարձվածաբանության առանձնահատկությունները, լեզվական նրբերանգները, կիղկվի խոսքը պոետիկ ժանրում

- Կենտրոնի գեղարվեստական խմբակների սաներին կհանձնարարվեն ելույթներ պատրաստել հայ-ռուս պոետների հայտնի ստեղծագործություններով, որոնք դարձել են երաժշտարվեստի գոհարներ
- «Русский дом» Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղի հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում
- «Հայ-ռուս գրողները» տեսաֆիլմի պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Շնորհակալագրերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Սաները կներկայացնեն հայ-ռուս գրականության նշանավոր գրողներին, ստեղծագործական ընդհանրությունները՝ որպես ռուս-հայկական բարեկամական կապի կարևոր առանձնահատկություն
- Նշանավոր գրողների գրական ժառանգությունը ներկայացնող «Հայ-ռուս գրողները» տեսաֆիլմի դիտում
- Երկու երկրների պոեզիայի ժանրի գլուխգործոցների հայտնի ստեղծագործությունների ընթերցում-մեկնաբանում, բովանդակային վերլուծություն, բնութագրի քննարկում, «Ընտանիք», «Русский дом» Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնների սաների կատարմամբ
- Պոետիկ կատարումներով համեմված գեղարվեստական ելույթներ /կենտրոնի երաժշտարվեստի խմբակներ/
- Շնորհակալագրերի հանձնում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Ներկայացնել հայ-ռուս գրողների գրական հարուստ ժառանգությունը, պոեզիայի գոհարները, մշակութային արժեքները
- Ամրակայել բարեկամ երկրների միջպետական հարաբերությունները
- Ուսուցանել ռուսերենի լեզվաոճական, դարձվածաբանական առանձնահատկությունները
- Խթանել ռուսերենի բանավոր խոսքի զարգացմանը, նպաստել բառապաշարի հարստացմանը
- Նպաստել օտար լեզվով հստակ և անկաշկանդ հաղորդակցմանը
- «Русский дом» և «Ընտանիք» կենտրոնի սաների միջև մշակութային երկխոսության ստեղծում

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Ռուս-հայկական հարուստ գրական ժառանգությանը ծանոթացած սաներ
- Ռուսերենի լեզվաբանությամբ հետաքրքրված պատանիներ
- Բառապաշարը հարստացրած, լեզվամշակութային գիտելիքները զարգացրած, թարգմանական հմտությունները բարելավված սաներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի ռուսերենի խմբակի սաներ՝ 50
- «Русский дом» Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի աշխատակիցներ, սաներ, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղի գրող-հրապարակախոսներ, մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 100

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

**Համագործակցող հաստատություններ**

- «Русский дом» Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոն, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ

**Իրականացման ժամկետը**

- Մարտ

### 10. Մարտական արվեստի հմտությունների ցուցադրական ելույթ

***Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Գյումրու Կյոկուշինկայ կարատեի սպորտի դպրոցի մարզիչների հետ միացյալ պարապմունքներ և վարպետաց դաս անցկացնելու պայմանավորվածության ձեռք բերում
- Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա նոր կատաների ներկայացում, ձեռքի և ոտքի հնարքներ
- Սաների մարզական պատրաստվածության, մենամարտելու կարողությունների
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում

*Անցկացում*

- Սպորտի դպրոցի մարզիչների հետ միացյալ պարապմունքներ և վարպետաց դասեր
- Մարտարվեստի լավագույն հնարքների ցուցադրություն
- Վարպետության դասերին լավագույնս դրսևորած սաներից ձևավորվի հավաքական թիմի ձևավորում՝ հետագայում միջազգային մրցաշարերին մասնակցելու համար:

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Առաջացնել հետաքրքրություն արևելյան մարտարվեստի՝ կյոկուշինկայ կարատեի նկատմամբ
- Խթանել սաների հետաքրքրությունը մարտական արվեստի նկատմամբ
- Մասնակիցներին զինել մարտարվեստին բնորոշ գաղափարներով
- Նպաստել առողջ ապրելակերպի զարգացմանը և ֆիզիկական պատրաստվածությանը
- Համագործակցել սպորտի դպրոցների հետ
- Ներկայացնել սաների ձեռք բերած հմտությունները
- Խրախուսել հաջողություն ունեցող սաներին

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Առողջ ապրելակերպի կարևորությունը գիտակցած դեռահասներ
- Մարտական արվեստով՝ կյոկուշինկայ կարատեով հետաքրքրված սաներ
- Կազմավորված մարտական արվեստի հավաքական թիմ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի մարտական արվեստի խմբակի՝ 40 սան
- Կյոկուշինկայ կարատեի մարզիչներ, ծնողներ՝ 90

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Համագործակցող հասպարություններ***

- Գյումրու Կյոկուշինկայ կարատեի սպորտի դպրոց

***Իրականացման ժամկետը***

- Մարտ

### 11. «Բարություն ստեղծող ձեռքեր» խորագրով վարպետաց դաս-ցուցահանդես

**Ծրագրի նկարագիրը, անցկացումը, ամփոփում**

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Կվիլինգի և վիտրաժային նկարչության խմբակների սաներին կհանձնարարվի կատարել ստեղծագործական աշխատանքներ «Արվեստն ու բարությունը» թեմայով
- Լավագույն աշխատանքների ընտրություն
- Նոր էսքիզների մշակում
- Գյումրու «Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոց» ՀՈԱԿ-ի և Ախուրյանի և Գյումրիի «Մոր և մանկան Ավստրիական» հիվանդանոցների հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Շնորհակալագրերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Գյումրու Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոցում մասնագիտությունների ներկայացում, վարպետաց դասի անցկացում
- Երկու հաստատությունների սաները համատեղ կկատարեն էսքիզների վերջնամշակում
- «Արվեստն ու բարությունը» թեմայով աշխատանքների ցուցահանդեսի բացում նկարչական դպրոցում
- Թեմատիկ 100 բացիկների նվիրաբերում Ախուրյանի Մոր և մանկան առողջության կենտրոնի նորածիններին

- 10-ը լավագույն աշխատանքների ընտրություն, նվիրաբերում Գյումրու Մոր և մանկան Ավստրիական մանկական հիվանդանոցում վիրահատված երեխաներին
- Շնորհակալագրերի հանձնում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Զարգացնել դեռահասների ստեղծագործական երևակայությունը, անհատական և խմբային աշխատելու կարողությունները
- Հանրայնացնել դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերը՝ կվիլինգը և վիտրաժային նկարչությունը
- Սաների մեջ սերմանել բարին գործելու մարդկային կարևոր առաքելությունը
- Մասնագիտական փորձի փոխանակում

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Արվեստի լեզվով բարին գործելու գաղափարն արժևորած սաներ
- Մասնագիտական կարողություններն ամրապնդած դեռահասներ
- Դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերով հետաքրքրված սաներ
- Կոմպոզիցիա մշակելու հմտություններ ձեռք բերած դեռահասներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի կվիլինգի, վիտրաժային նկարչության խմբակների սաներ՝ 30
- Գյումրու «Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոց» ՀՈԱԿ-ի մանկավարժներ, աշակերտներ՝ 40

***Իրականացման վայրը***

- Գյումրու «Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոց» ՀՈԱԿ

***Համագործակցող հասպատություն***

- Գյումրու «Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոց» ՀՈԱԿ

***Իրականացման ժամկետը***

- Ապրիլ

### 12. «Արևից ստացած ջերմային խնայողությունը» խորագրով այցելություն «Անի» ԲԲԸ արևային էներգետիկ կայան

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կուսուցանվեն՝
  - վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների կառուցման, վահանակների տեղադրման, նորոգման և սպասարկման միջազգային փորձի ուսումնասիրում
  - արևային էներգետիկ կայանների տեղադրման համապատասխան կիրառվելիք գործիքների, պարագաների կիրառման նորարար մեթոդներ
  - անվտանգության կանոններն ու դրանց կիրառման ձևերը
- «Անի» ԲԲԸ արևային էներգետիկ կայանի հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում

- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Սաները «Անի» ԲԲԸ արևային կայանում ոլորտի պատասխանատուների հետ կկատարեն համապատասխան տարածքի տեղազննում
- Նախագծի մշակում համապատասխան տեխնիկական պայմանների
- Տարածքին համապատասխան էլեկտրակայանի տարեկան մոտավոր եկամուտի խնայողության հաշվարկներ, վահանակների տեղադրում, հոսանքների ստուգում, միացումներ
- Ոլորտի մասնագետների հետ հետաքրքրող հարցերի շուրջ քննարկում, աշխատանքների վերլուծություն
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել արևային էներգետիկ կայանների հնարավոր բոլոր մեթոդների կիրառմանը տնտեսության զարգացման տեսլականում
- Արևային էներգետիկ կայանների գրագետ օգտագործման արդյունքում ունենալ ոլորտի զարգացման աճ
- Արդիական մասնագիտության հմտությունների, գիտելիքների փոխանցում
- Օգտագործել վերականգնվող էներգիայի ռեսուրսները, որը կարող է բարելավել կյանքի որակը և նպաստել երկրի կայուն զարգացմանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Տարբեր էներգետիկ համակարգերում աշխատելու ձգտող սաներ
- Տարբեր գործիքների հետ աշխատելու հմտություններ և կարողություններ ձեռքբերած սաներ
- Ինքնուրույն մտածելու կարողությունները զարգացրած դեռահասներ
- Էներգետիկ ոլորտում արդյունավետությունը երկրի տնտեսության զարգացման գործում նպաստող սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի արևային էներգիայի մոդելավորում խմբակի սաներ՝ 15
- «Անի» ԲԲԸ արևային էներգետիկ կայանի աշխատակիցներ՝ 20

***Իրականացման վայրը***

- «Անի» ԲԲԸ

***Իրականացման ժամկետը***

- Ապրիլ

## 13. «Պարում է Հայֆիլմը» խորագրով միջոցառման նվիրված՝ պարի միջազգային օրվան և Հայաստանի ազգային պարարվեստի միության և Գյումրու պարարվեստի դպրոցի կողմից կազմակերպված փառատոնի մասնակցություն

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Հայտնի կոմպոզիտորների՝ հայկական ֆիլմերի երաժշտությունների ուսումնասիրում

- Հայկական սիրված ֆիլմերի երաժշտությունների ընտրություն, տվյալ երաժշտական կինոկտորների նոր տեսահոլովակների պատրաստում
- Պարային բեմադրությունների մշակում
- Ժյուրիի կազմի ձևավորում՝ պարի խմբակների անվանակարգերի շնորհման համար
- Կընտրվեն պարային կատարումներ Հայաստանի Ազգային Պարարվեստի Միության և Գյումրու պարարվեստի դպրոցի համատեղ կազմակերպած փառատոնին ևս մասնակցելու համար
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում
- Անվանակարգերի վկայականների, հարցաթերթիկների պատրաստում
- Փորձերի անցկացում, բեմի ձևավորում

*Անցկացում*

- «Պարում է Հայֆիլմը» խորագրով միջոցառման բացում
- Կկատարվեն հայկական սիրված ֆիլմերի երաժտությունների պարային բեմադրություններ՝ զուգահեռ ներկայացնելով կոմպոզիտորներին, ֆիլմի պատմությունը՝ պատրաստած տեսահոլովակով
- «Լավագույն պարող», «Պարող աստղեր» անվանակարգերի շնորհում / երեքական/
- Պարի միջազգային օրվան նվիրված սաներն ելույթներով հանդես կգան Հայաստանի Ազգային Պարարվեստի Միության և Գյումրու պարարվեստի դպրոցի համատեղ կազմակերպած փառատոնին
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում:
- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Ձևավորել սովորողների մոտ ազգային մշակույթ
- Անվանի կոմպոզիտորների գրած հայկական ֆիլմերի երաժշտությունների արժևորում, գնահատում
- Զարգացնել մարմնի շարժումների կարողություններն ու հմտությունները
- Արժևորել պարարվեստի դերն ու նշանակությունը հայ մշակույթի պահպանման և տարածման գործում
- Ձևավորել բեմական մշակույթ, ներկայանալու պատասխանատվություն, գեղարվեստական մտածողություն
- Փառատոնի մասնակցությամբ՝ փորձի փոխանակման միջոցով նպաստել դեռահասների պարարվեստում ստեղծագործական ունակությունների զարգացմանը

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Հայկական մշակույթի մեջ ազգային, ժողովրդական պարերի կարևորությունը գիտակցող ու պահպանող սերունդ
- Պարարվեստի ոլորտում նոր փորձ ու գիտելիքներ ձեռք բերած սաներ
- Պարարվեստի մշակութային արժեքներին, ժողովրդական ավանդույթներին ծանոթացած սաներ
- Պարային բեմադրություններում շարժումները ճիշտ և գրագետ յուրացրած պատանիներ
- Պարարվեստի բնագավառում ստեղծագործական և կազմակերպչական ունակությունները զարգացրած դեռահասներ
- Տաղանդավոր և շնորհալի սաների բացահայտում
- Մասնագիտական կողմնորոշման նպաստում
- Մարզի այլ պարային խմբերի հետ համագործակցության խթանում

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի պարարվեստի խմբակների սաներ՝ 60
- Ծնողներ, մանկավարժներ, տարբեր խմբակների սաներ՝ 100

**Համագործակցող հաստատություններ**

- Հայաստանի Ազգային Պարարվեստի Միություն, Գյումրու պարարվեստի դպրոց

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» կենտրոն
- Գյումրու Արագած մարզամշակութային կենտրոն

**Իրականացման ժամկետը**

- Ապրիլ

**14. «Ծաղկազարդի խորհուրդը. Մանուկների օրհնության կարգ» խորագրով գեղարվեստական միջոցառում**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կիանձնարարվի ուսումնասիրել, ծանոթանալ Հայ Առաքելական եկեղեցու տոնի խորհուրդին, ժողովրդական ծիսակատարությունների ավանդույթներին
- Կընտրվեն եկեղեցական տոնին ձոնված շարականներ, ասիկներ, պարերեգեր
- Կպատրաստվեն՝ ուռենու ճյուղեր, հատիկ (խաշած ցորեն, որի հետ խառնում են ընկույզ, սիսեռ, չամիչ, շաքարահատիկ, տարբեր գույնի կլոր կոնֆետներ), կարկաչաներ, ճեռեր, զանգակներ, ծառի տնկիներ
- Մանուկների օրհնության կարգի տերունական աղոթքի ուսուցանում
- Փորձերի անցկացում
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Ծաղկազարդի առավոտյան՝ ժամերգության, Անդաստանի արարողության, մանուկների օրհնության կարգի, Սուրբ Պատարագի և Սուրբ Հաղորդության մասնակցություն
- Եկեղեցու բակում թատերականացված դրվագների ներկայացում եկեղեցական տոնի, ծիսական կարգի մասին
- Հոգևոր շարականների, ասիկների, պարերգերի կատարում
- «Խնկի ծառը ծաղկել է», «Կարկաչա» «Ջա~ն, գարուն է» «Գարուն եկավ», «Արև, արև, եկ» և այլ ազգային, ժողովրդական պարերգերի գեղարվեստական ելույթներ
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում:
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Արժևորել քրիստոնեական տոնի խորհուրդը և ժողովրդական ավանդույթները
- Ներկայացնել հոգևոր մշակութային գիտական կենտրոն Մարմաշենի վանական համալիրը, որպես ուխտատեղի
- Գնահատել ազգային, ժողովրդական ասիկները, շարականները եկեղեցական ծիսաշարերում

- Պարերի միջոցով ծանոթացնել ազգային տոներին, ծեսերին, ժողովրդական հավատալիքներին, ավանդույթներին, խաղերին
- Նպաստել սովորողների մոտ ազգային գիտակցության ձևավորմանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Ազգային հոգևոր մշակութային արժեքներին ծանոթացած սաներ
- Եկեղեցական տոնակատարությունները, ժողովրդական ավանդույթները գնահատած դեռահասներ
- Ժողովրդական, ազգային ասիկները, եկեղեցական շարականները պարարվեստում ներկայացրած պատանիներ
- Միջնադարյան հնագույն գոհար վանական համալիրի դերը հայ հոգևոր մշակույթում արժևորած դեռահասներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի պարարվեստի խմբակի սաներ՝ 50
- Հոգևորականներ, համայնքի վարչական աշխատակիցներ, համայնքաբնակներ՝ 100

***Համագործակցող կազմակերպություններ***

- Մարմաշեն համայնքի վարչակազմ

***Իրականացման վայրը***

- ՇՄ Մարմաշենի վանական համալիր

***Իրականացման ժամկետը***

- Ապրիլ

### 15. Ֆրանկոֆոնիայի տոնին նվիրված՝ «Ֆրանսիացիները՝ հայկական արմատներով» խորագրով զրույց-քննարկում

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

*Սաներին կհանձնարարվեն՝*

  - ✓ տեղեկություններ հավաքել հայտնի ֆրանսահայերի վերաբերյալ,
  - ✓ ներկայացնել հետաքրքիր փաստեր նրանց կյանքի և ստեղծագործական ուղու մասին,
  - ✓ պատրաստել տեղեկատվական սահիկահանդես, տեսանյութեր

- Կիրկվի սաների խոսքը հայերենով և ֆրանսերենով
- Հայտնի ֆրանսահայերի կերպարների ընտրություն
- «Ֆրանսիացիները՝ հայկական արմատներով» խորագրով զրույց-քննարկման թեմայի մշակում
- Հարցաթերթիկների պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի, պարագաների տրամադրում

*Անցկացում*

- Սաները կներկայացնեն հայտնի ֆրանսահայերի վերաբերյալ տեղեկություններ երկլեզու /հայերեն-ֆրանսերեն/
- «Ֆրանսիացիները հայկական արմատներով» զրույց-քննարկում հայտնի ֆրանսահայերից մի քանիսի հետ, վերջիններիս արվեստի հետքերով պատմող տեսաֆիլմի դիտում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի Facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել հայտնի ֆրանսահայերի կյանքին և գործունեությանը

- Զարգացնել լեզվական գիտելիքները և ձևավորել վերլուծական մտածողություն
- Արժևորել հայ-ֆրանսիական արմատները և դրանից բխող դարավոր բարեկամությունը

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Լեզվական գիտելիքները զարգացրած և ամրապնդած դեռահասներ
- Վերլուծական մտածողության ձևավորում
- Ֆրանսերեն լեզվի ուսուցման խթանում
- Հայ-ֆրանսիական հարաբերությունների գնահատում
- Ֆրանսահայ հայորդիների ստեղծագործական ուղու, ազգապահպան գործունեության արժևորում

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/**

- «Ընտանիք» կենտրոնի Ֆրանսերենի խմբակի սաներ՝ 24
- «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական կենտրոն, SPFA ֆրանսախոսների ակումբ, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան, Գյումրու հանրակրթական դպրոցների ֆրանսերեն լեզվի ուսուցիչներ, ֆրանսիական կառույցների ներկայացուցիչներ, կենտրոնի մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի խմբակների սաներ և ուսումնարանի ուսանողներ՝ 100

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

**Իրականացման ժամկետը**

- Ապրիլ

## 16. ‹‹Անզուգական Շեքսպիրը›› խորագրով բաց դաս

**Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանք*

- Սաները կուսումնասիրեն բրիտանացի հայտնի գրողի Վիլիամ Շեքսպիրի կենսագրությունն ու ստեղծագործությունները
- Կընտրվեն Շեքսպիրի սոնետներից անգլերեն և հայերեն լեզուներով
- Հեղինակի հայտնի գործերի հիման վրա նկարահանված՝ ‹‹Լիր արքա››, ‹‹Ռիչարդ Երրորդ››, ‹‹Համլետ›› ֆիլմերի դրվագների ընտրություն, մշակում, նոր տեսաhոլովակի պատրաստում
- ‹‹Անզուգական Շեքսպիրը›› խորագրով պաստառի պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Սաները կներկայացնեն ‹‹Անզուգական Շեքսպիրը›› թեման անգլերեն և հայերեն լեզուներով
- ‹‹Լիր արքա››, ‹‹Ռիչարդ Երրորդ››, ‹‹Համլետ›› ֆիլմերի դրվագներով տեսաhոլովակի ցուցադրում
- Վիլիամ Շեքսպիրի սոնետների ընթերցում անգլերեն և հայերեն լեզուներով
- Վիլիամ Շեքսպիրի թևավոր խոսքերով պաստառի ներկայացում
- Ունկնդրած թեմայի շուրջ հանդիսատեսի հետ հարցուպատասխանի միջոցով բաց դասի ամփոփում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ներկայացնել Վիլիամ Շեքսպիրի դերն ու կարևորությունը անգլիական գրականության մեջ
- Զարգացնել սաների հետաքրքրությունը Անգլիայի մշակույթի նկատմամբ

- Գնահատել ստեղծագործությունների գեղարվեստական դերն ու դաստիարակչական բնույթը
- Զարգացնել սաների բանավոր խոսքի հմտություններն ու բառապաշարը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Ստեղծագործությունների խրատական և դաստիարակչական բնույթը ընկալած մասնակիցներ
- Անգլիական գրականությանը և պատմությանը ծանոթացած սաներ
- Լեզվական գիտելիքներն ամրապնդած պատանիներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի անգլերենի խմբակի սաներ՝ 35
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 60

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Մայիս

### 17. «Մեդիան հանուն կրթության» խորագրով բաց դաս-քննարկում

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կներկայացվեն Հայաստանի, միջազգային մեդիայի և տեղեկատվական անվտանգության մասին տեղեկություններ, մուլտիմեդիայի զարգացող ժանրերը, փաստերի ստուգում, հետաքննական լրագրության սկզբունքները, տվյալների հեղափոխությունը տարբեր ոլորտներում
- Կուսումնասիրեն միջազգային մեդիադաշտի անդրադարձը հասարակական, քաղաքական, մշակութային ոլորտներում /անգլերենով/ համեմատականներ տանելով տեղի՝ մեդայի հետ
- Վերլուծական աշխատանք կտանեն՝ BBC և SHANT TV լրատվականների նորությունների անդրադարձերի միջև
- Կծանոթանան տեղի լրատվամիջոցների գործունեությանը, միջազգային լուսաբանումների թեմաներին, դրանց թարգմանություններին և ներկայացման մոտեցումներին
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Մեդիան հանուն կրթության» խորագրով բաց դաս-քննարկում լրագրողների հետ «Շանթ Գյումրի» հեռուստառադիոընկերությունում
- Օրվա միջազգային լրահոսի թարգմանություն /անգլերենից հայերեն/, նյութի կազմում և հրապարակում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ներկայացնել, ուսումնասիրել, վերլուծել միջազգային մեդիայի դերը և ազդեցությունը հասարակության շրջանում
- Բարձրացնել զանգվածային լրատվամիջոցների դերը
- Կրթության, մեդիայի և տեղեկատվական գրագիտության ծրագրերի միջև կապերի հաստատում, ամրապնդում
- Դեռահասների համար մշակված կրթական ռեսուրսների կիրառում, մեդիա և տեղեկատվական գրագիտության վերաբերյալ քննարկումներում նրանց ներգրավելու և ապագա նախագծերի համար նոր հայեցակարգերի ստեղծում

- Նպաստել անգլերենի բանավոր խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացման
- Խթանել օտար լեզվով միջազգային լուրեր ընթերցելու և թարգմանելու արհեստավարժությանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Մեդիա ոլորտի առանձնահատկությունները անգլերենով յուրացրած սաներ
- Տեղեկատվական և թվային մեդիայի գործիքներից գրագետ օգտված պատանիներ
- Միջազգային լրահոսի լուսաբանումներին ծանոթացած, թարգմանած և հայերենով լուր գրելու հմտություններին տիրապետած պատանիներ
- Անգլերենի և հայերենի բառապաշարը հարստացրած, լեզվամշակութային գիտելիքները զարգացրած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի անգլերենի և մեդիագրագիտության խմբակների սաներ՝ 30
- Հեռուստալրագրողներ, օպերատորներ՝ 50

***Իրականացման վայրը***

- «Շանթ Գյումրի» ՀՌԸ

***Համագործակցող հասպապություններ***

- «Շանթ Գյումրի» ՀՌԸ

***Իրականացման ժամկետը***

- Մայիս

### 18. «Արվեստն իմ պատուհանից» խորագրով վարպետաց դաս

**Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը**

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաները կծանոթանան ժամանակակից քանդակագործ, զարդագործ, նկարիչ՝ երկվորյակ եղբայրներ Աշոտ և Մամիկոն Միքայելյանների ստեղծագործական գործունեությանը
- Կուսումնասիրեն արվեստաբանների կատարողական տեխնիկան
- Աշոտ և Մամիկոն Միքայելյանների հետ՝ «B 612 Art Gallery» արվեստանոցում վարպետաց դաս անցկացնելու պայմանավորվածության ձեռք բերում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Ստեղծագործական աշխատանքների էսքիզների մշակում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Աշոտ և Մամիկոն Միքայելյանները կներկայացնեն իրենց արվեստի նրբությունները, նկարչական ուղղվածությունը
- Վարպետաց դասի անցկացում «B 612 Art Gallery» արվեստանոցում, սաներին կփոխանցվեն նկարչական հմտություններ, ստեղծագործելու նոր տեխնիկա
- «Նկարչի հետ արվեստանոցում» ստեղծագործական աշխատանքների ցուցադրություն
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել երիտասարդ քանդակագործ, զարդագործ, նկարիչ՝ Աշոտ և Մամիկոն Միքայելյանների արվեստին
- Բացահայտել արվեստի ժամանակակից մոտեցումներն ու պահանջները

- Փոխանցել նկարչական նոր հմտություններ
- Սաների մոտ ձևավորել թիմում աշխատելու կարողություն
- Արվեստի միջոցով արժևորել և պահպանել ազգային ինքնությունը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Աշոտ և Մամիկոն Միքայելյանների արվեստին, ստեղծագործական գործունեությանը ծանոթացած սաներ
- Ժամանակակից արվեստի գաղտնիքները բացահայտած սաներ
- Նկարչական նոր գիտելիքներ, հմտություններ ձեռք բերած պատանիներ
- Վարպետաց դասերում, կազմակերպչական աշխատանքներում ակտիվ ներգրավվածություն ցուցաբերած դեռահասներ
- Արդի պահանջներով՝ ազգային դիմագիծը արժևորած, պահպանած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի բատիկայի, գեղանկարչության, արծաթագործության խմբակների սաներ՝ 45
- «B 612 Art Gallery» արհեստանոցի վարպետներ՝ 15

***Իրականացման վայրը***

- «B 612 Art Gallery»

***Իրականացման ժամկետը***

- Մայիս

**19. «3D մոդելավորումը՝ ստեղծագործական աշխարհի նոր հորիզոններ» խորագրով բաց դաս**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաները կուսումնասիրեն՝
  - հայկական հոգևոր-մշակութային խոնարհված կոթողները
  - կառուցման ժամանակաշրջանները, կիրառված զարդարվեստը
- Խոնարհված կոթողների, հայկական զարդերի մոդելների ընտրություն
- Վերականգնման նախագծի մշակում, մոդելավորում
- 3D Max և Rhinoceros ծրագրերի գործիքների կիրառման նոր մեթոդներով գրաֆիկաների ստեղծում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- ՇՄ Անիպեմզա համայնքի 4-5-րդ քրիստոնեական եկեղեցու՝ Երերույքի տաճարի, ՇՄ Կրասար համայնքի 19-րդ դարի եռաթռիչք կամուրջի վերականգնում 3D ձևաչափով
- Հոգևոր-մշակութային կոթողների զարդանախշերի, հայկական զարդերի 3D մոդելավորում
- 3D տպագրություն, ցուցադրություն
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Վերականգնել հայկական հոգևոր-մշակութային խոնարհված կոթողները
- Պահպանել ազգային մշակութային արժեքների նախկին տեսքը, ծրագրի միջոցով տալ նոր կյանք
- Սովորեցնել 3D մոդելավորման հիմնական հմտությունները, գրագետ օգտագործել աշխատանքային գործիքներն ու ծրագրերը
- Օժանդակել սաներին նախագծային աշխատանքները համակարգչային եռաչափ ծրագրով կատարելու և գրագետ դիզայներական մշակումներ ստեղծելուն

- Ստեղծել տարբեր նախագծեր և մոդելներ, տիրապետել տպիչ սարքի հնարավորություններին
- Ստեղծագործական մտածողության խթանում
- Ուղղորդել նախամասնագիտական կողմնորոշմանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- 3D մոդելավորման հիմնական հմտությունները յուրացրած սաներ
- Եռաչափ մոդելների, դիզայներական էսքիզների մշակումների և գծագրերի հիմնական հատկությունները, ֆորմատները հստակ պատկերացրած պատանիներ
- Ստեղծագործական մտածողությունը զարգացրած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի 3D մոդելավորման խմբակների սաներ՝ 14
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի տարբեր խմբակների սաներ՝ 60

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Մայիս

**20. «Բնության և արվեստի ներդաշնակություն» խորագրով պլեներ-ցուցահանդես**

***Ծրագրի նկարագիր, անցկացում, ամփոփում***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Հայկական մշակութային ժառանգության ուսումնասիրում
- Մշակութային արժեքներում կիրառված՝ բնապատկերներով, խորհրդանշական նախշերով թեմատիկ աշխատանքների էսքիզավորում
- Լավագույն աշխատանքների ընտրություն, վերջնամշակում
- տեղադրում
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում
- Լավագույն աշխատանքների ընտրություն
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Բնության և արվեստի ներդաշնակություն» խորագրով ցուցահանդեսի բացում Գյումրու Անի թաղամասի «Անի» պուրակում
- Գյումրու խիտ բնակեցված թաղամասի պուրակում թաղիքագործության, կարպետագործության, գորգագործության, ուլունքագործության խմբակների ստեղծագործական պլեներ-ցուցահանդես թաղամասի պատանիների, երիտասարդների /ցանկության դեպքում մեծահասակների/ ներգրավմամբ
- Գեղանկարչության խմբակի նկարչական պլեներ արվեստի վաստակավոր նկարիչների գունապնակով՝ /Մ. Սարյան, Մ. Ավետիսյան, Հ. Կոջոյան և այլք/
- «Բնության և արվեստի ներդաշնակություն» խորագրով պլեներ-ցուցահանդեսի ամփոփում, գեղարվեստական ելույթներ կենտրոնի պարարվեստի, դուդուկի, դհոլի խմբակների սաների կատարմամբ
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել հայկական ազգային մշակույթի կարևոր բաղադրիչ՝ ուլունքագործության, գորգագործության, կարպետագործության, թաղիքագործության արվեստի ստեղծման պատմությանը, զարդանախշերի տիպային առանձնահատկություններին
- Արժևորել ազգային արհեստի և արվեստի նվիրյալների, հայտնի վարպետների ստեղծագործությունները, գնահատել ժողովրդական ավանդույթներում արհեստի և արվեստի դերը
- Ձևավորել հետաքրքրություն հին արհեստների նկատմամբ
- Ամրապնդել սաների մասնագիտական կարողությունները
- Զարգացնել էսքիզ՝ երկրաչափական, բուսական և կենդանական զարդանախշերով գծագրելու և մշակելու կարողություն
- Ընդգրկել խմբային և կազմակերպչական աշխատանքներում, զարգացնել ստեղծագործելու երևակայությունը,կարողություններն ու հմտությունները
- Նպաստել մասնագիտական կողմնորոշմանը
- Զարգացնել սաների ազատ և ինքնուրույն ստեղծագործելու ունակությունները
- Պահպանել ազգային արժեքներն ու մշակութային դիմագիծը, նպաստել դրանց հանրայնացմանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Ազգային արհեստով և արվեստով հետաքրքրված սաներ
- Ազգային, ժողովրդական մշակույթը պահպանած և հանրայնացրած դեռահասներ
- Հայապահպանման գործում հայկական արհեստների դերն ու նշանակությունն արժևորած սաներ
- Անվճար կրթությամբ մասնագիտական հմտություններ ձեռք բերած պատանիներ
- Գեղագիտական ճաշակը, արժեհամակարգը զարգացրած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի գորգագործության, կարպետագործության, թաղիքագործության, ուլունքագործության, գեղանկարչության խմբակների սաներ՝ 100 սան
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ, Անի թաղամասի բնակիչներ՝ 200

***Իրականացման վայրը***

- Գյումրու Անի թաղամասի «Անի» պուրակ

***Իրականացման ժամկետը***

- Հունիս

## 21. ‹‹Խաղաղությունն իմ հոգում›› երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված խորագրով միջոցառում

***Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- «Մանկությունը կյանք է» խորագրով դեկորատիվ-կիրառական արվեստի խմբակների ստեղծագործական աշխատանքների կատարում
- Լավագույն աշխատանքների ընտրություն
- Գեղարվեստական, ցուցադրական ելույթների, երաժշտական կատարումների, պարային համարների ընտրություն, ուսուցանում
- Հաղորդավարական խոսքերի մշակում, հաղորդավարների ընտրություն
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում
- Փորձերի անցկացում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Միջազգային տոնի ստեղծման պատմության ներկայացում
- Մարտական արվեստի ցուցադրական ելույթների անցկացում
- «Մանկությունը կյանք է» խորագրով ցուցահանդես,նկարչական ֆլեշմոբ
- Գեղարվեստական միջոցառում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Վառ հիշողություններով լի և տոնական մթնոլորտի ստեղծում
- Օրվա խորհուրդի ու նշանակության մեկնաբանում
- Փոխանցել պաշտպանված լինելու և սիրված լինելու զգացողություններ

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Սիրո և պաշտպանության մթնոլորտում հայտնված երեխաներ
- Ուրախ և տոնական օր անցկացրած մասնակիցներ
- Անհոգ ժպիտներով, խաղաղ երկնքում՝ գեղեցիկ կատարումներով, բարձր տրամադրությունով ոգևորված սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի 6-12 տարեկան սաներ՝ 780

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն, Գյումրու պատմամշակութային արգելոց տարածք

***Իրականացման ժամկետը***

- Հունիս

### 22. «Խաչատուր Ավետիսյանի երաժշտական ստեղծագործությունները պարային մեկնաբանությամբ» խորագրով միջոցառում

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփում***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին տեղեկություններ կհաղորդվեն ՀԽՍՀ կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի ստեղծագործությունների, կոմպոզիտորական արվեստի մասին
- Կներկայացվեն անվանի կոմպոզիտորների գրած պարեղանակները
- Լավագույն ստեղծագործությունների ընտրություն
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում
- Փորձերի անցկացում

*Անցկացում*

- Սաները հանդիսատեսին կներկայացնեն Խ. Ավետիսյանի կոմպոզիտորական ուղին, երգարվեստում թողած ավանդն ու դրանց ժամանակակից մշակումները
- Կհնչեն «Հանինա», «Պար Արցախի», «Տավիղ», «Իրիկնային», «Հայուհի», «Վաղարշապատի պար», «Հիշողություններ», «Ճերմակ աղավնի» «Աղջիկների խաղ պար», «Տոնական Հայաստան» ստեղծագործությունները պարային մեկնաբանությամբ
- Սաները կընդգծեն դրանց նշանակությունն ու առանձնահատկությունները ժամանակակից մոտեցումներով
- Ելույթի խոսքեր

- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և lib.armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Արժևորել ազգային մշակույթն ու արժեքները, ճանաչել Խաչատուր Ավետիսյանի երաժշտական ստեղծագործությունները
- Ամրապնդել սաների մոտ պարարվեստին բնորոշ գիտելիքները
- Շեշտադրել հայ ժողովրդական պարերի տեսակների առանձնահատկությունները, Խաչատուր Ավետիսյանի երաժշտական ստեղծագործությունները պարային մեկնաբանությամբ
- Երեխաների մեջ առաջացնել սեր և հետաքրքրություն նոր պարային բեմադրությունների հանդեպ
- Պարարվեստի միջոցով դեռահասներին ուսուցանել երաժշտության ռիթմի զգացողություն և պարային ճկունություն
- Բեմական մշակույթի և էթիկայի ձևավորում

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Հայկական ժողովրդական պարերն արժևորած, հայ երաժշտության մշակույթին ծանոթացած դեռահասներ
- Հայկական ժողովրդական պարեղանակների առանձնահատկություններին տիրապետած սաներ
- Ժամանակակից պարային մշակումները յուրացրած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի պարարվեստի խմբակի սաներ՝ 50
- Մանկավարժներ, պարարվեստի ներկայացուցիչներ, կենտրոնի տարբեր խմբակների սաներ՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Հունիս

## 23. «Մկնիկ հարսնացուն» մանկական մյուզիքլ

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կհանձնարարվի ծանոթանալ բանաստեղծ, մանկագիր, երգիծաբան, դրամատուրգ՝ Սուրեն Մուրադյանի «Մկնիկ հարսնացուն» հեքիաթ-պոեմին
- Կներկայացվի հայ դրամատուրգ և կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանի «Մկնիկ հարսնացուն» մանկական մյուզիքլը
- Կուսուցանվեն առանձին համարներ, խմբերգեր, պարային բեմադրություններ
- Դաշնամուրի նվագակցությամբ մյուզիքլի բեմադրության փորձերի անցկացում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Մկնիկ հարսնացուն» մանկական մյուզիքլի ներկայացում
- Ելույթի խոսքեր

- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթանացնել մյուզիքլ-երաժշտաթատերական ժանրի առանձնահատկություններին՝ հիմնված խոսքի, բեմական շարժման և երաժշտության սինթեզի վրա
- Բարության, ընկերասիրության, թիմային աշխատանք, միմյանց նկատմամբ հարգանքի ձևավորում
- Զարգացնել սաների ստեղծագործական ունակությունները՝ երգելու, պարելու և արտահայտվելու միջոցով,
- Նպաստել դեռահասների մոտ երգարվեստի և բեմական արվեստի զարգացմանը
- Զվարճանք և ուրախություն. Սաներին պարգևել հաճելի ժամանց, ստեղծել հետաքրքիր և զվարճալի մթնոլորտ

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Սուրեն Ստեփանի Մուրադյանի գրական ստեղծագործություններին ծանոթացած սաներ
- Հայ դրամատուրգ և կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանի «Մկնիկ հարսնացուն» մանկական մյուզիքլը արժևորած դեռահասներ
- Երաժշտաթատերական ստեղծագործության տեսակի՝ մյուզիքլի առանձնահատկություններին տիրապետած պատանիներ
- Երգարվեստով և բեմական արվեստով ոգեշնչված սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի ակադեմիական վոկալի, դաշնամուրի խմբակի սաներ՝ 30
- Երգարվեստի գործիչներ, մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Հունիս

## 24. 2024-2025 ուսումնական տարվա հաշվետու համերգների, ցուցահանդեսների կազմակերպում, գիտելիքների ամփոփում

***Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Ժամանակացույցի, թեմատիկ պլաններին համապատասխան հարցաշարերի, քննական թեստերի կազմում
- Անհրաժեշտ նյութերի, գործիքների և պարագաների ձեռքբերում
- Ցուցահանդեսների, պարային բեմադրությունների, համերգների և ցուցադրական ելույթների կազմակերպում
- Պատվոգրերի, վկայագրերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Գիտելիքների ստուգում, ցուցադրական և գեղարվեստական ելույթներ
- Ուսումնական տարվա ընթացքում լավագույն արդյունք ցուցաբերած սաների պարգևատրում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հարցաթերթիկների լրացում

- Հաշվետվության ներկայացում

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Ամփոփել 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում սաների յուրացրած տեսական գիտելիքները, գործնական կարողություններն ու հմտությունները
- Գնահատել սաների ձեռքբերումները
- Աջակցել դեռահասների մասնագիտական կողմնորոշման ամրապնդմանը

**Ակնկալվող արդյունքները**

- 2024-2025 ուսումնական տարում մասնագիտական գիտելիքները հարստացրած դեռահասներ
- Բացահայտված շնորհալի սաներ
- Մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշված դեռահասներ

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցներ/, թիվը**

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի սաներ՝ 1582

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

**Իրականացման ժամկետը**

- Հունիս-հուլիս

## 25. «Գրչի և վրձնի վարպետները.Ավետիք Իսահակյան 150 և Մարտիրոս Սարյանի 145»-ամյակներին նվիրված միջոցառումների շարք

**Միջոցառման իրականացման վայրը՝** «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն, ՀՀ Շիրակի մարզի՝ Իսահակյան, Անիպեմզա համայնքներ, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունք, ՀՀ ԿԳՄՍՆ Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ, Թբիլիսիի «Վերնատուն» գրական-ակումբ, «Հայարտուն» կրթամշակութային և երիտասարդության կենտրոն, Թբիլիսիի հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանք պանթեոն, Վիրահայոց թեմի Սուրբ Գևորգ եկեղեցի, Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան /Գյումրի/, Երերույքի տաճար, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան և Կոմիտասի անվան պանթեոն /Երևան/:
**Միջոցառման սկիզբը՝** օգոստոս, 2025թ.
**Միջոցառման ավարտը՝** նոյեմբեր, 2025թ.

**Միջոցառման համառոտ նկարագրությունը**

***1-ին փուլ.***

*Սեմինարներ.*

- ✓ «Վարպետը՝ վարպետների քաղաքում» նվիրված՝ Ավետիք Իսահակյանի 150-ամյա հոբելյանին /«Ընտանիք» ՄՊՍ կենտրոն/,
- ✓ «Հայաստանի և Հարավի գույները, և մեր նախնիների անգին ժառանգությունը» նվիրված՝ Մարտիրոս Սարյանի 145-ամյակին /«Ընտանիք» ՄՊՍ կենտրոն/, ՀՀ ԿԳՄՍՆ Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

*Ստեղծագործական աշխատանքների հանրապետական մրցույթ.*

- ✓ «Գրչի և վրձնի վարպետները»՝ դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերի ստեղծագործական մրցույթի հայտարարում
- ✓ Սարյանական գույներով նկարչական աշխատանքների կատարում

***2-րդ փուլ.***

Թատերականացված ասմունքներ, ստեղծագործությունների ընթերցում-մեկնաբանում, բովանդակային վերլուծություն, բնութագրի քննարկում: Ներկայացումներ, գեղարվեստական ելույթներ, նկարչական պլեներ՝ ՀՀ Շիրակի մարզի Իսահակյան, Անիպեմզա համայնքներում, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային և երիտասարդության կենտրոնում: Խոնարհումի և հարգանքի տուրք

մեծ հայորդիների հիշատակին՝ Վիրահայոց թեմի Սուրբ Գևորգ եկեղեցում, Թբիլիսիի հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանք պանթեոնում, այցելություն Թբիլիսիի «Վերնատուն» գրական-ակումբ:

***3-րդ փուլ.***

Ստեղծագործական մրցույթի ամփոփում: «Գրչի և վրձնի վարպետները» խորագրով մշակութային փառատոն՝ ծրագրի մասնակից համայնքների, Թբիլիսիի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների, սաների, գրականագետների, արվեստագետների մասնակցությամբ «Ընտանիք» կենտրոնում:

Ծրագրի ամփոփում՝ կրթամշակութային հաստատություններին, սաներին շնորհակալագրերի, պատվոգրերի և մրցանակների հանձնում:

***Եզրափակիչ փուլ.***

Ծրագրի ակտիվ մասնակից սաների համար ճանաչողական այցի կազմակերպում՝ Ավետիք Իսահակյանի, ՇՄ Անիպեմզա համայնք՝ Երերույքի տաճար, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարաններ, Կոմիտասի անվան պանթեոն:

*Միջոցառումների նպատակը, խնդիրները*՝ նպաստել մշակութային արժեքների, գեղարվեստական նյութերի հանրայնացմանը, ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը: Բարձրացնել արտադպրոցական կրթության դերը, հղկել և հարստացնել դեռահասների բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու (գրավոր և բանավոր) ունակությունը, ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ: Ապահովել դեռահասների, պատանիների անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը: Պահպանել և զարգացնել հայկական մշակույթի և արվեստի բնագավառում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթները: Ձևավորել ձեռք բերած բարոյական արժեքներին հետևելու գիտակցություն, արժեհամակարգ և դաստիարակել նրա բաղադրիչները պահպանելու ու հարստացնելու պահանջմունք:

***Միջոցառման նկարագրությունը***

- *Միջոցառման հիմնավորումը՝ միջոցառման իրականացման անհրաժեշտությունը.*

Այսօր արագորեն փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակներն ու տեխնոլոգիաների զարգացման աննախադեպ արագ ընթացքը, ներկա իրողությունների համատեքստում հրամայական է, որ ամրապնդվեն մշակութային ժառանգության պահպանման հանձնառությունները և պարտավորությունները: Ծրագրի իրագործումը նպաստում է դեռահասների մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը: Կրելով հայ մշակույթի երկու մեծերի ժառանգությունը, դեռահասների մոտ ձևավորվում է ազգային արժեքների նկատմամբ հարգանք, ինչպես նաև դրանց տարածումը նպաստում է ազգային ինքնության հանրահռչակմանը: Գրական աշխարհի և արվեստի հետ միաձուլումը կհանգեցնի երիտասարդների գեղագիտական ճաշակի բարձրացմանը, ընթերցանության հետաքրքրությանը: Համայնքներում կրթամշակութային միջոցառումների իրագործումը ոչ միայն կաշխուժացնի համայնքաբնակների մշակութային անցուդարձը, այլև համաչափ և մատչելի հասանելիություն կապահովի տարատեսակ ծրագրերի մասնակցությանն ու շարունակականությանը:

- *Միջոցառման նպատակներն ու խնդիրները.*

✓ Հայ մեծանուն գրականագետ, արվեստագետ վարպետների թողած գրական-մշակութային ժառանգության արժեքների բացահայտում, պահպանում և արժևորում,

✓ Վրաստանի հայ համայնքի, Արցախից բռնի տեղահանված և Հայաստանում ապաստանած, համայնքների պատանիների համախմբում, բարեկամական կապերի ամրապնդման աջակցում, տարածաշրջանային կրթամշակութային երկխոսության հարթակի ձևավորում,

✓ Ազգային, համամարդկային արժեքներով օժտված հարուստ և հայրենասիրական գաղափարներով դաստիարակված անձի ձևավորման նպաստում,

✓ Մայրենի լեզվի, գրականության և արվեստի արժեքների ձեռքբերման կարևորության ու անհրաժեշտության գիտակցում,

- ✓ Թիմային և կազմակերպչական աշխատանքներում պատանիների ընդգրկում, գեղագիտական ճաշակի, քաղաքացիական, ազգային գիտակցության բարձրացում,
- ✓ Համագործակցային ունակությունների, համակեցության որակների ձևավորում,
- ✓ Ստեղծագործական երևակայության և պատկերավոր մտածողության, նպատակասլացության զարգացում,
- ✓ Կիրառական արվեստի ճյուղերի նկատմամբ հետաքրքրության սերմանում, հայաստանյան մշակույթի, համազգային վարպետների թողած հարուստ ժառանգության, երաժշտության կատարողական արվեստների հաղորդակցում,
- ✓ Ընթերցանության, նկարչական ունակությունների խթանում:

## Միջոցառման կառուցվածքը

- *Միջոցառման իրականացման համար նախատեսված աշխատանքները՝ նախապատրաստում, իրականացում և արդյունքների ամփոփում.*

Նախապատրաստում՝ համագործակցող կազմակերպությունների, սեմինարավարների, տրանսպորտային ծառայության հետ պայմանավորվածություն, միջոցառումների համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերում, մասնակիցների ընտրություն, ծրագրի մասնակիցների գործուղման կազմակերպում, ստեղծագործական մրցույթի, նկարչական աշխատանքների, ժամանակացույցի, թատերականացված ասմունքների, ներկայացումների, գեղարվեստական ելույթների, նկարչական պլեների, գեղարվեստական մասի և ցուցահանդեսի ընթացակարգերի մշակում:
Հարցախույզ թերթիկների, նկարահանող և տեսաֆիլմ պատրաստող կազմակերպության ընտրություն, ծրագրի վերաբերյալ տեղեկատուի և տեսանյութի պատրաստում:
*Իրականացում՝*
***1-ին փուլ.***
*Սեմինարներ.*

- ✓ «Վարպետը՝ վարպետների քաղաքում» նվիրված՝ Ավետիք Իսահակյանի 150-ամյա հոբելյանին /«Ընտանիք» ՄՊՍ կենտրոն/,
- ✓ «Հայաստանի և Հարավի գույները, և մեր նախնիների անգին ժառանգությունը» նվիրված՝ Մարտիրոս Սարյանի 145-ամյակին /«Ընտանիք» ՄՊՍ կենտրոն/, ՀՀ ԿԳՄՍՆ Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

*Ստեղծագործական աշխատանքների հանրապետական մրցույթ.*

- ✓ «Գրչի և վրձնի վարպետները»՝ դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերի ստեղծագործական մրցույթի հայտարարում
- ✓ Սարյանական գույներով նկարչական աշխատանքների կատարում

***2-րդ փուլ.***
Թատերականացված ասմունքներ, ստեղծագործությունների ընթերցում-մեկնաբանում, բովանդակային վերլուծություն, բնութագրի քննարկում: Ներկայացումներ, գեղարվեստական ելույթներ, նկարչական պլեներ՝ ՀՀ Շիրակի մարզի Իսահակյան համայնքում, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային և երիտասարդության կենտրոնում:Խոնարհումի և հարգանքի տուրք մեծ հայորդիների հիշատակին՝ Վիրահայոց թեմի Սուրբ Գևորգ եկեղեցում, Թբիլիսիի հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանք պանթեոնում, այցելություն Թբիլիսիի «Վերնատուն» գրական-ակումբ:
***3-րդ փուլ.***
Ստեղծագործական մրցույթի ամփոփում: «Գրչի և վրձնի վարպետները» խորագրով մշակութային փառատոն՝ ծրագրի մասնակից համայնքների, Թբիլիսիի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների, սաների, գրականագետների, արվեստագետների մասնակցությամբ «Ընտանիք» կենտրոնում:
Ծրագրի ամփոփում՝ կրթամշակութային հաստատություններին, սաներին շնորհակալագրերի, պատվոգրերի և մրցանակների հանձնում:
***Եզրափակիչ փուլ.***
Ծրագրի ակտիվ մասնակից սաների համար ճանաչողական այցի կազմակերպում՝ Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարաններ, Կոմիտասի անվան պանթեոն:

*Արդյունքների ամփոփում*՝ համագործակցող կազմակերպություններին շնորհակալագրերի, մասնակից դեռահասներին պատվոգրերի հանձնում: Ծրագրի վերաբերյալ հարցաթերթիկների լրացում: Արձագանքների հիման վրա վերլուծության կազմակերպում: Տեսանյութի և տեղեկատուի պատրաստում, հաշվետվության կազմում:

- *Գործողությունների ծրագրերը, գործողությունների ժամանակացույցը.*

| Հ/հ | Գործողությունների ծրագիրը | Գործողությունների ժամանակացույցը |
|---|---|---|
| 1. | Համագործակցող կազմակերպությունների, սեմինարավարների, տրանսպորտային ծառայության հետ պայմանավորվածության, ժամանակացույցի միջոցառումների համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերում, մասնակիցների ընտրություն, գործուղման կազմակերպում, , ստեղծագործական մրցույթի հայտարարում, նկարչական աշխատանքների, թատերականացված ասմունքների, ներկայացումների, գեղարվեստական ելույթների, նկարչական պլեների, մշակութային փառատոնի ընթացակարգերի մշակում | օգոստոս |
| 2. | Թատերականացված ասմունքներ, ստեղծագործությունների մեկնաբանում, բովանդակային վերլուծություն, բնութագրի քննարկում: Ներկայացումներ, գեղարվեստական ելույթներ, նկարչական պլեներ՝ ՀՀ Շիրակի մարզի Իսահակյան, համայնքներում, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային և երիտասարդության կենտրոնում | սեպտեմբեր-հոկտեմբեր |
| 3. | Ստեղծագործական մրցույթի ամփոփում: «Գրչի և վրձնի վարպետները» խորագրով մշակութային փառատոն | հոկտեմբեր |
| 4. | Եզրափակիչ փուլ | |
| 5. | Տեսանյութի, տեղեկատուի և հաշվետվության պատրաստում | նոյեմբեր |

## Ազդեցությունը և շարունակականությունը

Արտադպրոցական կրթության համաչափ ներդրումը Շիրակի մարզի համայնքներում ևս զարգացնում է երեխաների սոցիալական, ինքնասպասարկման և ինտելեկտուալ հմտությունները, ձևավորում անձի՝ որպես քաղաքացու արժեհամակարգը, բազմաֆունկցիոնալ կարողություններն ու փափուկ հմտությունները, նպաստում հոգևոր կրթամշակութային գիտելիքների ձեռքբերմանը և խթանում մարդկային կապիտալի զարգացումը: Ծրագրի ռազմավարության հիմքում ընկած են ազգային ինքնության և արժեքների հենքի վրա ստեղծված մշակույթի պահպանումը, զարգացումը, տարածումն ու հանրահռչակումը, ազգային և համամարդկային արժեքների հետ զուգորդումը և հաղորդակցումը: Առաջնային են համարվում համընդհանուր ներառականության ապահովումը, մշակույթի և արվեստի հասանելիությունը: Կարևորվում է պետություն-կենտրոն-համայնք համագործակցության փոխշահավետ մեխանիզմների խթանումը, ազգային արժեքների գերակայության ամրապնդումը:
Ծրագրի ազդեցության շարունակականությանը և կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում պայմանավորված է մշտապես համատեղ միջոցառումների կազմակերպմամբ, փորձի փոխանակմամբ և գործընկեր կազմակերպությունների, համայնքային իշխանությունների, ծնողական խորհուրդների հետ համագործակցության ընդլայնմամբ:

## Տեսանելիությունը

Միջոցառումների տեսանելիության լուսաբանում՝ կրթական կայքէջերում, «Կրթություն» շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ների հաղորդաշարերում: Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական տեսանյութի, տեղեկատուի պատրաստում և տրամադրում նաև համագործակցող կազմակերպություններին: Տեսանյութը տեղադրվում է entanik.am, YouTube կայքէջերում, facebook սոցիալական կայքում:

**Համագործակցություն միջոցառման շրջանակներում**

*Միջոցառման շրջանակներում համագործակցող կազմակերպություններն են՝ ՀՀ Շիրակի մարզի* Իսահակյան համայնքում, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունք, ՀՀ ԿԳՄՍՆ Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային և երիտասարդության կենտրոնը «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը:
Ծրագրի իրականացման գործում համագործակցող կազմակերպություններն ապահովում են սաների և մանկավարժների մասնակցությունը սեմինարների, գեղարվեստական միջոցառումներին: Համայնքները տրամադրում են դասասենյակներ:
Հաստատությունների հետ համագործակցության արդյունավետության վկայությունն է համայնքի և ծնողական խորհուրդների կողմից գրավոր խնդրանք-առաջարկների, համագործակցության հուշագրերի, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում իրականացրած համանման ծրագրի արդյունքների դրական արձագանքների առկայությունը:

**Միջոցառման մասնակիցները**

- *Միջոցառման մասնակիցների ընդհանուր թիվը՝ 740*
  - ✓ Սեմինարներ՝ «Ընտանիք» կենտրոնի սաներ և մանկավարժներ՝ 240
  - ✓ Շիրակի մարզի Իսահակյան համայնք՝ 90
  - ✓ Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունք՝ 10
  - ✓ ՀՀ ԿԳՄՍՆ Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ՝ 10
  - ✓ Վրաստանի հանրապետության Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային և երիտասարդության կենտրոնում՝ 190
  - ✓ «Ընտանիք» կենտրոնի սաներ և մանկավարժներ՝200
- *Միջոցառման մասնակիցների նկարագրությունը և ընտրության կարգը.*
  - ✓ «Ընտանիք» կենտրոնի տարբեր միջազգային, հանրապետական, մարզային մրցույթներին մասնակցած, արդյունքներ գրանցած, շնորհալի, մասնագիտական գիտելիքներին ու հմտություններին տիրապետած սաներ, մանկավարժներ:
  - ✓ Գյուղական համայնքների կրթամշակութային հաստատությունների մանկավարժներ և աշակերտներ: Ամփոփիչ փուլի մասնակիցների ընտրությունը կատարվում է միջոցառումների ակտիվ մասնակցության փաստով և տվյալ հաստատության տնօրենության առաջարկով:

**26. «Արվե՞ստ է, արդյոք շախմատը» խորագրով միաժամանակյա սեանս**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Կանոնակարգի կազմում և հաստատում
- Մասնակիցների ընտրություն
- Սեանսն անցկացնող սաների ընտրություն
- Համագործակցող կազմակերպությունների հետ պայմանավորվածության ձեռք բերում
- Անհրաժեշտ պարագաների տրամադրում
- Պատվոգրերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Սեանսի բացում, բացման խոսք, սեննասն անցկացնող սաների ներկայացում
- Հրավիրված անձանց ներկայացում և ելույթի խոսքի տրամադրում
- Սեանսի մեկնարկ
- Սեանսի փակում
- Արդյունքների ամփոփում, պատվոգրերի հանձնում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Սաների մոտ զարգացնել տրամաբանական մտածողությունը
- Ձևավորել վստահություն սեփական ուժերի նկատմամբ և թիմում աշխատելու ունակություն
- Ամրապնդել համագործակցությունը Շիրակի մարզի դպրոցների և շախմատի մարզադպրոցների հետ
- Խթանել սաների հետաքրքրությունը շախմատի նկատմամբ
- Խրախուսել հաջողություն ունեցող սաներին

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Շախմատի մարզադպրոցների և հանրակրթական դպրոցների հետ համագործակցության ամրապնդում
- Ձևավորված նոր ընկերական հարաբերություններ
- Թիմում աշխատելու կարողություններ ձեռք բերած դեռահասներ
- Շախմատային գիտելիքներով հարստացած սաներ
- Փորձի փոխանակում

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի սաներ՝ 30
- Գյումրու շախմատի մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների շախմատի մանկավարժներ, աշակերտներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 80

***Համագործակցող հաստատություններ***

- Գյումրի համայնքի Տիգրան Պետրոսյանի անվան «Շախմատի մարզադպրոց» ՀՈԱԿ
- Գյումրու շախմատի մարզադպրոց, Շիրակի մարզի հանրակրթական դպրոցներ

***Իրականացման վայրը***

- Գյումրի համայնքի Տիգրան Պետրոսյանի անվան «Շախմատի մարզադպրոց» ՀՈԱԿ, / «Ընտանիք» կենտրոն /

***Իրականացման ժամկետը***

- Հուլիս

## 27. «Հայ կոմպոզիտորական արվեստի կրողները» խորագրով գեղարվեստական միջոցառում նվիրված երաժշտության համաշխարհային օրվան

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաները կծանոթանան հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործական աշխարհին
- Կունկնդրեն կոմպոզիտորների լավագույն մանկական ստեղծագործությունները
- Կուսուցանվեն հայ անվանի՝ Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Ալ. Հարությունյանի, Ա. Սաթյանի դաշնամուրային ստեղծագործությունները, Ռ. Պետրոսյանի, Գ.Չթչյանի մանկական երգերն ու խմբերգերը
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում

- Փորձերի անցկացում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Հայ կոմպոզիտորական արվեստի կրողները» խորագրով գեղարվեստական միջոցառմանը, սաները կներկայացնեն կոմպոզիտորների ստեղծագործական ուղին, երաժշտարվեստում թողած ժառանգությունը
- Կհնչեն կոմպոզիտորների հայտնի ստեղծագործությունները, դաշնամուրի նվագակցությամբ, ներկայացնելով դրանց մշակումների, պահպանության ու կարևորության մասին
- Համերգային ելույթներով հանդես կգան նաև կենտրոնի պարարվեստի և երաժշտարվեստի խմբակների սաները, կկատարեն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները յուրովի մեկնաբանությամբ
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում:

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին և ուսուցանել երաժշտական նոր կատարումներ
- Արժևորել երաժշտությամբ տրված գեղագիտական դաստիարակության դերը
- Գնահատել հայ կոմպոզիտորական արվեստի գոհարները
- Նպաստել սաների մոտ բեմական արվեստի զարգացմանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Հայ մեծանուն կոմպոզիտորների արվեստով ոգեշնչված և ստեղծագործություններն յուրովի կատարած սաներ
- Երաժշտական արվեստի կատարողական հմտությունները սերտած պատանիներ
- Երգարվեստի առանձնահատկություններին տիրապետած դեռահասներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի դաշնամուրի, ակադեմիական վոկալի խմբակների սաներ՝ 30
- Երաժշտարվեստի ներկայացուցիչներ, մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 80

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Համագործակցող հաստատություն***

- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

***Իրականացման ժամկետը***

- Հուլիս

### 28. «Ինչպե՞ս ապահովել արագ զարգացում ՏՏ ոլորտում» խորագրով բաց դաս

***Ծրագրի նկարագիր, անցկացում, ամփոփում***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կուսուցանվեն՝
  - ի՞նչպես գտնել ՏՏ ոլորտի կարևոր խնդիրների լուծման ուղիներ,
  - ծրագրային լեզուների գործիքներից ճիշտ օգտվելու հմտություններ, արդյունավետ կիրառման մեթոդներ
  - տեխնոոլորտի արագ զարգացման մեթոդների ուսումնասիրման սկզբունքներ, առաջնահերթություն
  - մասնագիտական գրականությունից և վեբ կայքերից օգտվելու կարողություններ
- Հայաստանյան խոշորագույն տեխնոլոգիական բիզնես ինկուբատորների և խորհրդատվական ընկերությունների գործունեության ուսումնասիրում
- Հարցաթերթիկների պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում

*Անցկացում*

- ՏՏ ոլորտի մարտահրավերներին դիմադրելու գաղափարների, քայլերի հաջորդականության ու տրամաբանական մոդելների ներկայացում սահիկահանդեսի միջոցով
- Վեբ հարթակներ ստեղծելու, գործիքներից օգտվելու հասանելիության և մատչելիության ապահովում
- Կրթություն և բիզնես ուղղվածությանը միտված, ՏՏ ոլորտի զարգացման ու առաջխաղացման նախադրյալների ներկայացում
- «Ինչպե՞ս ապահովել արագ զարգացում ՏՏ ոլորտում» թեմայով զրույց-քննարկում հայկական ՏՏ ոլորտի խոշորագույն գործատուներից՝ «Սինոփսիս Արմենիան» Գյումրու մասնաճյուղի ներկայացուցիչների հետ
- Գրաֆիկական խմբագրիչներով մշակած կոմպոզիցիաների, նկարների, գովազդային պաստառների ներկայացում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՄ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- ՏՀՏ նորարարությունների հնարավորությունների մասին իրազեկվածության բարձրացում
- Թվային հմտությունների և կրթության խթանում
- Ծրագրային լեզուների իմացության և գրագետ օգտագործման կարողությունների հաղորդում
- Տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների արդյունավետ կիրառման մեթոդների անդրադարձ տարբեր բնագավառներում
- Համակարգչային գիտելիքների ամրապնդում

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Համակարգչային տարբեր ծրագրերի հետ աշխատելու կարողություններով օժտված դեռահասներ
- ՏՏ ոլորտի արդյունավետությունը երկրի տնտեսության զարգացման գործում նպաստող սաներ
- Մասնագիտական հմտություններն ամրապնդած պատանիներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի վեբ ծրագրավորման և դիզայն-անիմացիայի խմբակների սաներ՝ 30
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի խմբակների սաներ՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Համագործակցող հասպապրություն***

- «Սինոփսիս Արմենիան» Գյումրու մասնաճյուղ

***Իրականացման ժամկետը***

- Հուլիս

## 29. «Արվեստը՝ որպես ինքնարտահայտման ազատություն» խորագրով ցուցահանդես նվիրված Գյումրու օրվան

***Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Մասնագիտական նյութերի ուսումնասիրում՝ օգտվելով համապատասխան գրականությունից
- Կներկայացվեն Գյումրու ժողովրդական ճարտարապետության, հարուստ մշակութային ժառանգության, ավանդույթների ու սովորույթների առանձնահատկությունները
- Սաները կծանոթանան գյումրվա արվեստի և արհեստի ճյուղերին, զարդանախշերին և դրանց կատարման տեխնիկային
- «Գյումրի. վարպետաց քաղաք» թեմայով հայկական զարդանախշերով նախապատկերների /էսքիզներ/ պատրաստում
- Լավագույն աշխատանքների ընտրություն, վերջնամշակում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Գյումրի. վարպետաց քաղաք» խորագրով ցուցահանդեսի բացում /զուգահեռ նկարագրություն/ կենտրոնի ցուցասրահում, և Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի բակում
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական armedu.am և entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում:
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրներն***

- Ներկայացնել գյումրվա արհեստն ու արվեստը տարբեր ժամանակաշրջաններում, և դրանց կիրառումը կենցաղում
- Ծանոթացնել գյումրեցի վարպետներին, վերջիններիս ստեղծագործական կյանքն ու գործունեությունը
- Զարգացնել սաների ազատ և ինքնուրույն ստեղծագործելու ունակություններն ու կարողությունները
- Արժևորել հին քաղաքի պատմաճարտարապետական մշակութային ժառանգությունը
- Նպաստել դրանց պահպանմանն ու տարածմանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Գյումրու մշակութային ժառանգությանը ծանոթացած սաներ
- Ուսումնասիրած տեղեկությունները գործնականում լիարժեք կիրառելու փորձ ձեռք բերած դեռահասներ
- Մասնագիտական կարողություններն ամրապնդած դեռահասներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի փայտարվեստի և կավագործության խմբակների սաներ՝ 30
- Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի աշխատակիցներ, մանկավարժներ, սաներ, ծնողներ, հյուրեր՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան

***Իրականացման ժամկետը***

- Սեպտեմբեր

**30. «Անկախությունը՝ մեզ, մենք՝ անկախությանը» խորագրով գեղարվեստական միջոցառում նվիրված ՀՀ անկախության 34 -ամյակին**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաները կծանոթանան ՀՀ Անկախ Հայաստանի 34 տարիների՝ անցած ուղու պատմությանը, անկախության արժեքի ու դրա կարևորությանը
- Կուսուցանվեն հայ անվանի՝ Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Ալ. Հարությունյանի, , Ռ. Պետրոսյանի, Արմենակ և Սերգեյ Խաչատրյանների, Ջիվան Գասպարյանի ստեղծագործությունները
- Կկատարվեն հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործական աշխարհի անկախության տոնին նվիրված՝ հայրենասիրական երգերի, պարերի ընտրություն
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում
- Փորձերի անցկացում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Անկախությունը՝ մեզ, մենք՝ անկախությանը» խորագրով գեղարվեստական միջոցառմանը, սաները կներկայացնեն կոմպոզիտորների ստեղծագործական ուղին, երաժշտարվեստում թողած ժառանգությունը անկախության տոնին նվիրված
- Կհնչեն կոմպոզիտորների հայտնի ստեղծագործությունները, դուդուկի և դհոլի նվագակցությամբ
- Համերգային ելույթներով հանդես կգան նաև կենտրոնի պարարվեստի և երաժշտարվեստի խմբակների սաները
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին և ուսուցանել երաժշտական նոր կատարումներ
- Արժևորել երաժշտությամբ տրված գեղագիտական դաստիարակության դերը
- Գնահատել հայ կոմպոզիտորական արվեստի գոհարները անկախության տոնին ձոնված
- Նպաստել սաների մոտ բեմական արվեստի զարգացմանը, միջխմբային համագործակցությանը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Հայ մեծանուն կոմպոզիտորների արվեստով ոգեշնչված և ստեղծագործություններն յուրովի կատարած սաներ
- Երաժշտական արվեստի կատարողական հմտությունները սերտած պատանիներ
- Ազգային նվագարանների առանձնահատկություններին տիրապետած դեռահասներ
- Հայրենիքի անկախության արժեքը կարևորած սաներ

- Անկախ Հայաստանի մարտահրավերները հաղթահարելու պատրաստ դեռահասներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի դուդուկի, դհոլի, պարարվեստի, երգարվեստի խմբակների սաներ՝ 50
- Երաժշտարվեստի ներկայացուցիչներ, մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 80

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Համագործակցող հասպապություն***

- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

***Իրականացման ժամկետը***

- Սեպտեմբեր

**31. «Վրձնի վարպետը» խորագրով Մարտիրոս Սարյանի 145-ամյակին նվիրված ցուցահանդես-միջոցառում**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

*Սաները կծանոթանան՝*

- հայկական գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիր՝ Մ. Սարյանի ստեղծագործական աշխարհին,
- հայ բազմադարյան մշակույթի գեղանկարչական ժանրերի սահմաններին (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ-կիրառական արվեստ), հատկանշական գծերին, կամրջելով նորօրյա արվեստին՝ ստեղծելով ձևով ու բովանդակությամբ նոր, հումանիստական, «սարյանական» արվեստ,
- վարպետի՝ գրական աշխարհի հայտնի գործիչների /Ավ. Իսահակյան, Եղ. Չարենցի և այլք/ հետ հանդիպումներին ու վերջիններիս դիմանկարների ստեղծման նրբություններին

- Կուսումնասիրեն վրձնի վարպետի արվեստում թողած մշակութային ժառանգությունը, դրանցում արտացոլած գունային ներդաշնակությունը, առանձնահատկություններն ու կատարման տեխնիկան
- Կհանձնարարվի էսքիզավորել՝ «Հայաստանն ասես կառուցվել է Սարյանի էսքիզներով» սարյանական վրձնի գույներին համահունչ բնապատկերներ, գրաֆիկական, ակվարել, գեղանկարչական, մատիտանկարներ, դիմանկարներ և այլն
- Լավագույն աշխատանքների ընտրություն, վերջնամշակում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Վրձնի վարպետը» խորագրով ցուցահանդես-միջոցառման բացում
- «Խոսող կտավներ.Սարյանական ձեռագիր» տեսանյութի դիտում
- Գեղանկարչության խմբակի սաները կներկայացնեն Մ.Սարյանի ստեղծագործական ուղին, համաշխարհային արվեստում սարյանական գույների առանձնահատկությունները
- «Հայաստանն ասես կառուցվել է Սարյանի էսքիզներով» ստեղծագործական աշխատանքների, վարպետի վրձնի գույների կիրառության նկարագրություն, բացատրություն
- Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի բանաստեղծությունների ընթերցում, ասմունքում, գրական աշխարհի ստեղծագործությունները սարյանական մոտիվներով վրձնած աշխատանքների ներկայացում
- Ելույթի խոսքեր

- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և lib.armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Արժևորել Մ. Սարյանի դերն ու նշանակությունը գեղանկարչական արվեստում
- Սաներին ծանոթացնել մեծանուն արվեստագետի և գրական աշխարհի գործիչների հետ անցած ուղին, ստեղծագործական աշխարհը
- Գեղանկարչական աշխատանքների միջոցով գնահատել և պահպանել արվեստագետի ձեռագիրը
- Նպաստել մշակութային արժեքների հանրայնացմանը
- Սաների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Հայկական մշակույթի և արվեստի բնագավառում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթները պահպանած և զարգացրած սաներ
- Հայաստանի գեղանկարչական դպրոցի հիմնադրման ակունքներն ամրապնդած դեռահասներ
- Ձեռք բերած բարոյական, մշակութային արժեքներին հետևելու գիտակցությունն ու արժեհամակարգը հարստացրած սաներ:

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի գեղանկարչության խմբակի սաներ՝ 40
- Արվեստագետներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Հոկտեմբեր

## 32. «Լիվերպուլյան քառյակի՝ The Beatles-ի երաժշտության ազդեցությունը ժամանակակից սերնդի վրա» խորագրով բաց դաս

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաները կծանոթանան խմբի ձևավորման և ստեղծագործական անցած ուղու պատմությանը, երգացանկի հայտնի ստեղծագործություններին
- Կուսումնասիրեն, կբացահայտեն խմբի անդամների բնավորությունը, թե ինչպե՞ս է հասարակությունն ընկալում նրանց և ի՞նչ ազդեցություն ունեն ժամանակակից երիտասարդության վրա
- Կունկնդրեն խմբի հայտնի երգերը, կթարգմանեն դրանք, կկազմվեն երգի տողերի հերթականությունը փոխված և բաց թողնված բառերով տեքստեր /անգլերենով/
- Խմբի մասին պատմող տեսանյութերի, լավագույն տեսահոլովակների ընտրություն
- «Անմոռանալի բիթլս» խորագրով տեսասահիկի պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- Բաց դասին «Անմոռանալի բիթլս» խորագրով տեսասահիկի ցուցադրությամբ սաները հանդիսատեսին կներկայացնեն բրիտանական աշխարհահռչակ ռոք-խմբի ստեղծման պատմությունը, երաժիշտ-կատարողների կյանքն ու մշակութային ուղին
- Սաներին կբաժանվեն հայտնի ստեղծագործությունների տեքստերը, վորքիններս կլրացնեն բաց թողնված բառերն ու կփորձեն ճիշտ դասավորել երգի տողերը
- Խմբի մասին պատմող տեսանյութերի դիտում-քննարկում
- Կհնչեն ռոք խմբի երգացանկի լավագույն ստեղծագործությունները կիթառի և երգարվեստի խմբակների սաների կատարմամբ
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և lib.armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Արժևորել աշխարհահռչակ խմբի ռոք ժանրում թողած մեծ ներդրումն ու ազդեցությունը
- Հաղորդակից դարձնել «The Beatles» խմբի երաժշտարվեստին
- Զարգացնել սաների երաժշտական ճաշակը
- Ապահովել սաների համար ստեղծագործական միջավայր, զարգացնել թիմային համագործակցությունը
- Բարելավել սաների անգլերենի իմացությունը, զարգացնել օտար լեզվով լսելու, ընթերցելու, թարգմանելու հմտությունները
- Ստեղծել համագործակցություն կենտրոնի այլ խմբակների միջև

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Բրիտանական հայտնի լիվերպուլյան քառյակի՝ «The Beatles» խմբի պատմությանը և ստեղծագործություններին ծանոթացած սաներ
- Աշխարհահռչակ երգչախմբի կատարումների միջոցով անգլերենի բառապաշարը հարստացրած դեռահասներ
- Թարգմանչական կարողություններն ամրապնդած պատանիներ
- Հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտությունները զարգացրած սաներ
- Ռոք խմբի ստեղծագործությունները գնահատած և հանրայնացրած ժամանակակից սերունդ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի անգլերենի, համակարգչային ուսուցման և կիթառի խմբակների սաներ՝ 40
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 80

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Հոկտեմբեր

### 33. «Արվեստի ձայներ» խորագրով համերգային միջոցառում

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Սաներին կներկայացվի երաժշտարվեստում կիթառի կատարողական մասնակցային, առանձնահատկությունները, ստեղծագործություններ, որոնք հնարավոր է կատարել նաև կիթառով
- Կուսումնասիրեն և կծանոթանան աշխարհահռչակ կոմպոզիտորների, կիթառահար վարպետների ստեղծագործական ուղուն, երաժշտարվեստի հայտնի գործերին
- Կընտրվեն ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան հայտնի կոմպոզիտորների, կիթառահարների, ստեղծագործությունները
- Կբաժանվեն ընտրված ստեղծագործություններն ակորդներով
- Փորձերի անցկացում
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Արվեստի ձայներ» համերգային միջոցառմանը սաները գեղարվեստական կատարումներին զուգահեռ կներկայացնեն ստեղծագործության հեղինակին, գործիքավորումը արված կիթառի համար
- Կհնչեն Կոմիտասի, Ռուբեն Հախվերդյանի, Ֆորշի, Արմինե Հայրապետյանի, ռուսական հայտնի Լյուբե երգչախմբի, Վիկտոր Ցոյի կատարումները ժամանակակից մշակումներով
- Գեղարվեստական կատարումները կզուգակցվեն նաև դուդուկի և ակադեմիական վոկալի խմբակի սաների կատարումներով
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Զարգացնել սաների երաժշտական ճաշակը
- Համագործակցել երաժշտական այլ նվագարանների հետ
- Առաջացնել հետաքրքրություն երաժշտական գործիքի նկատմամբ
- Նպաստել սաների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը
- Զարգացնել սաների ստեղծագործական ունակությունները

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Հայտնի ստեղծագործությունները նոր մշակումներով ներկայացրած դեռահասներ
- Բեմական կեցվածքն ու խոսքը զարգացրած սաներ
- Հայ և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններին հաղորդակից դարձած պատանիներ
- Երաժշտական գործիքին տիրապետած սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի կիթառի, դուդուկի և ակադեմիական վոկալի խմբակի սաներ՝ 30
- Երաժշտարվեստի գործիչներ, մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 80

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Հոկտեմբեր

**34. «Բնությունը մեծագույն ուսուցիչ» խորագրով ցուցահանդես**

***Ծրագրի նկարագիրը, անցկացում, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

*Սաները կծանոթանան՝*

– հայկական ասեղնագործության մեջ բազմատեսակ նախշերին՝ բուսական ու կենդանական, զարդանախշերից մինչև երկրաչափական պատկերներին

– ասեղնակարերի տարածված տեսակները տարբեր բնակավայրերին բնորոշ, յուրովի մշակումներով

- Կուսումնասիրեն հայկական ասեղնագործ արվեստում ժամանակակից վարպետների աշխատանքները
- «Նախշոնց նախշ» արվեստանոցի հետ համագործակցության ձեռք բերում
- Կընտրվեն զարդանախշեր, կկատարվեն էսքիզներ, վերջնամշակում կտորի վրա
- Լավագույն աշխատանքների ընտրություն
- Անհրաժեշտ նյութերի ու պարագաների տրամադրում
- Հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Բնությունը մեծագույն ուսուցիչ» խորագրով ցուցահանդեսի բացում
- Ստեղծագործական աշխատանքների նրբությունների ու պատկերած զարդանախշերի նշանակության ներկայացում
- Ելույթի խոսքեր
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Զարգացնել սաների ստեղծագործական ունակությունները
- Ձևավորել հետաքրքրություն՝ տեսնելու բնության գեղեցկությունն ու ինքնատիպությունը
- Արժևորել թեմայի դերն ու կարևորությունը, պահպանել հայկական զարդանախշերի կիրառությունը
- Ձևավորել նկարը գրագետ վերարտադրելու հմտություններ, բնությունից ստացած տպավորությունը աշխատանքի մեջ արտահայտելու կարողություն
- Բացահայտել շնորհալի սաներին

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Հայկական ասեղնագործ արվեստի առանձնահատկություններին, զարդանախշերին, նկարիչների ստեղծագործություններին ծանոթացած սաներ
- Հայ արվեստի և արհեստի դերն ու նշանակությունն արժևորած պատանիներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի ասեղնագործության խմբակի սաներ՝ 10
- Մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 80

***Համագործակցող հասպապությյուններ***

- «Նախշոնց նախշ» արվեստանոց

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Նոյեմբեր

**35. Անտուան դը Սենտ Էքզյուպերիի ««Փոքրիկ իշխանի» այցը «Ընտանիք» մոլորակ» միջոցառումների շարք**

***Ծրագրի նկարագիրը, անցկացումը, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Ֆրանսերենի խմբակի սաներին կհանձնարարվեն՝
  - ✓ ծանոթանալ Անտուան դը Սենտ Էքզյուպերիի կյանքին և ստեղծագործական աշխարհին, «Փոքրիկ Իշխան» գրքի բովանդակությանը
  - ✓ առանձնացնել գրքի իրենց նախընտրած հատվածները, վերլուծել բովանդակությունը
  - ✓ գրել «Ամենագլխավորը աչքով չես տեսնի/ Միայն սիրտն է սրատես» վերնագրով շարադրություն / վերնագիրն ըստ ընտրության/
- Կենտրոնի դեկորատիվ կիրառական արվեստի խմբակների սաներին կհանձնարարվի «Փոքրիկ Իշխան»-ի կերպարներով կատարել ստեղծագործական աշխատանքներ
- Լավագույն աշխատանքների ընտրություն
- Հայկական Կարիտաս Գյումրու «Փոքրիկ Իշխան» կենտրոնի հետ համագործակցության պայմանավորվածության ձեռք բերում / սաները կներգրավվեն ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումներում, կծանոթանան Անտուան դը Սենտ Էքզյուպերիի կյանքին և ստեղծագործական աշխարհին, «Փոքրիկ իշխան» գրքի բովանդակությանը, կգրեն «Ամենագլխավորը աչքով չես տեսնի/ Միայն սիրտն է սրատես» թեմայով շարադրություն և «Ընտանիք« կենտրոնի դեկորատիվ կիրառական արվեստի խմբակների սաների հետ կկատարեն ստեղծագործական աշխատանքներ/
- Կենտրոնի թատերական խմբակին կհանձնարարվի բեմադրել Փոքրիկ իշխանը՝ արդիական մոտեցումներով
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում
- Հրավիրատոմսերի, շնորհակալագրերի,պատվոգրերի, հարցաթերթիկների պատրաստում

*Անցկացում*

- «Փոքրիկ իշխան» կենտրոնի սաները կհյուրընկալվեն «Ընտանիք» կենտրոնում
- «Ընտանիք» և «Փոքրիկ իշխան» կենտրոնների սաները համատեղ ստեղծած ցուցապաստառին կգրեն կամ կնկարեն «Փոքրիկ իշխան» գրքի հերոսներին և նախընտրած մեջբերումները
- Պատկերազարդ գրքի ստեղծում՝ «Ընտանիք» և «Փոքրիկ իշխան» դեկորատիվ կիրառական արվեստի խմբակների սաների աշխատանքներով
- «Միայն սիրտն է սրատես/ Ամենագլխավորը աչքով չես տեսնի» թեմայով շարադրությունների ընթերցում/հայերենով և ֆրանսերենով/
- «Փոքրիկ իշխան» բեմադրության պրեմիերայի դիտում
- Ցուցահանդեսի բացում, լավագույն աշխատանքների հեղինակներին պատվոգրերի և շնորհակալագրերի հանձնում
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Ծանոթացնել Անտուան դը Սենտ Էքզյուպերիի կենսագրությանը և ստեղծագործություններին
- Զարգացնել՝ վերլուծելու, կարծիք արտահայտելու, սեփական մտքերը բարձրաձայնելու կարողությունները
- Հետաքրքրություն առաջացնել ֆրանսերեն լեզվի և գրականության նկատմամբ
- Հարստացնել ֆրանսերենի բառապաշարը
- Զարգացնել թիմային աշխատանքի և հաղորդակցման կարողությունները
- Խթանել ստեղծագործական մտածողության զարգացմանը
- Նպաստել ֆրանսերեն լեզվի և մշակույթի տարածմանը, կարևորել համագործակցությունը

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Անտուան դը Սենտ Էքզյուպերիի կյանքին և ստեղծագործություններին ծանոթացած սաներ
- «Փոքրիկ իշխան» գրքի բարոյախրատական իմաստն ընկալած սաներ

- Հաղորդակցական, ստեղծագործական ունակությունները հարստացրած սաներ
- Համագործակցության ամրապնդում, փորձի փոխանակում

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի ֆրանսերենի, թատերական արվեստի, խեցեգործության, կվիլինգի, բատիկայի, քանդակագործության, մանրանկարչության, գեղանկարչության խմբակների սաներ, ՝ 70
- «Ընտանիք» և Հայկական Կարիտասի Գյումրու «Փոքրիկ իշխան» կենտրոնի մանկավարժներ, սաներ մանկավարժներ, ծնողներ ՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Համագործակցող հասպապրություն***

- Հայկական Կարիտասի Գյումրու «Փոքրիկ իշխան» կենտրոն

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Նոյեմբեր

**36. «Ինքնություն. Բարբառն ազգային հարստություն» խորագրով միջոցառում**

***Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

- Ներկայացնել հայերենի բարբառների թիվը, պատմությունը, պահպանությունն ու կիրառությունը
- Տարբեր բարբառներով հետաքրքիր պատումների, ստեղծագործությունների ընտրություն
- «Ինքնություն. Բարբառն ազգային հարստություն» թեմայի քննարկման բանախոսների հետ պայմանավորվածության ձեռքբերում
- Հարցաթերթիկների պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում

*Անցկացում*

- Հայ ինքնության վերլուծությունը ազգագրագետի պրիզմայով
- «Ինքնություն. Բարբառն ազգային հարստություն» թեմայի քննարկում /ազգագրագետներ/
- Մշակութային ինքնության վերաբերյալ վերլուծությունների, ուսումնասիրությունների ներկայացում /մշակութաբաններ/
- Ազգային ինքնություն ունենալու կարևորության, ձևավորման նախադրյալների, ազգային ինքնության փոփոխությունների և տրանսֆորմացիաների ներկայացում, հայկական ինքնության, կառուցվածքի մասին՝ համեմատական անցկացնելով այլ ժողովուրդների հետ / ազգագրագետներ, լեզվաբաններ/
- Տարբեր բարբառներով երաժշտական, թատերականացված հետաքրքիր պատումների, ստեղծագործությունների կատարումներ /Արցախ, Շիրակ, Լոռի, Սյունիք և այլն/
- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Բարբառների արժևորում, ազգապահպանության նպաստում
- Գաղափարական մտածողության խթանում
- Համայնքաշինական մշակույթի ձևավորում

- Արժեքների շուրջ երկխոսության ծավալում
- Անձնական հավաքական ինքնության, ճանաչողության, արժեքաբանության գնահատում
- Բարբառների նկատմամբ հետաքրքրության առաջացում
- Բարբառների հանրահռչակում

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Բարբառների դերն ու նշանակությունը ազգապահպանության գործում արժևորած սաներ
- Ինքնության կարևորությունը գնահատած պատանիներ
- Հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության՝ բարբառները պահպանած, հանրահռչակած դեռահասներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի՝ մեդիագրագիտության, ստեղծագործական լրագրության, թատերական արվեստի, ռուսերենի և անգլերենի խմբակների սաներ՝ 70
- Ազգագրագետներ, մշակութաբաններ, լեզվաբաններ, մանկավարժներ, ծնողներ, կենտրոնի սաներ՝ 100

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Համագործակցող կազմակերպություններ***

- ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի՝ ազգագրագետներ,
- Լեզվաբաններ, մշակութաբաններ

***Իրականացման ժամկետը***

- Դեկտեմբեր

## 37. Ամանորյա երաժշտական միջոցառում, դիմակահանդես

***Ծրագրի նկարագիրը, անցկացումն, ամփոփումը***

*Նախապատրաստական աշխատանքներ*

*Ամանորյա միջոցառումների շարքն իրականացվելու է կենտրոնի խմբակների տարբեր տարիքի սաների համար*

- Մինչև 10 տարեկանների համար ամանորյա հեքիաթ բեմադրության ընտրություն,
- 11-ից մինչև 13 տարեկան սաներին կբաշխվի ամանորյա բանաստեղծություններ, կուսուցանվեն պարեր, երգեր
- 14-ից մինչև 18 տարեկան պատանիները կպատրաստեն դիմակներ, հագուստներ,
- Փորձերի անցկացում
- Եղևնու զարդարում, դահլիճի ձևավորում
- Հարցաթերթիկների, դիմակների պատրաստում
- Անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրում

*Անցկացում*

- Ամանորյա հեքիաթ բեմադրություն, շուրջպար՝ համերաշխության և համախմբվածության խորհուրդի ուղերձով
- Ամանորյա հանդեսներ Ձմեռ պապի և Ձյունանուշի մասնակցությամբ՝ պարեր, երգեր, ասմունքային կատարումներ
- Դիմակահանդես՝ խաղերով, պարային ելույթներով ամանորյա միջոցառումների շարքի ամփոփում
- Ամանորյա նվերների հանձնում, հնարավորության դեպքում

- Հարցաթերթիկների լրացում

*Ամփոփում*

- Ծրագիրը կլուսաբանվի կրթական և armedu.am, entanik.am կայքէջերում, «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի facebook սոցիալական էջում
- Հաշվետվության ներկայացում

***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***

- Կարևորել հեքիաթի դերը երեխաների կյանքում
- Զարգացնել մասնակիցների բանավոր խոսքը և ստեղծագործական երևակայությունը
- Ձևավորել ինքնադրսևորման, ինքնուրույնության, միմյանց լսելու և օգնելու հմտություններ
- Սերմանել բարին գործելու առաքելություն
- Ստեղծել նախատոնական ուրախ մթնոլորտ

***Ծրագրի ակնկալվող արդյունքները***

- Դերասանական կարողություններ ձեռք բերած սաներ
- Բեմում ինքնուրույնություն դրսևորած սաներ
- Հեքիաթի բարոյախրատական նշանակությունն ընկալած մասնակիցներ
- Նախատոնական բարձր տրամադրությամբ լցված սաներ

***Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցները/***

- «Ընտանիք» կենտրոնի 6-18 տարեկան սաներ՝ 1500 և ավելի

***Իրականացման վայրը***

- «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն

***Իրականացման ժամկետը***

- Դեկտեմբեր

*2025թվականի մանկավարժական խորհրդի նիստեր*

| Հ/հ | Նիստերի օրակարգ | Ժամկետ | Ծանոթ. |
|---|---|---|---|
| 1. | 1. 2024թ.-ի տարեկան կատարած աշխատանքների և իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում /տնօրեն, գեղարվեստական մասի վարիչ, հաշվապահ, գրադարանավար, տնտեսվար, պահեստապետ/<br>2. 2024թ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունների ներկայացում /տնօրենի տեղակալներ, տնօրենի օգնական, ավագ մանկավարժ, գեղարվեստական մասի վարիչ, կազմակերպիչ մանկավարժ, կիրառական արվեստի խմբակների համակարգող/<br>3. 2025 թվականի աշխատանքային պլանների և նախատեսվող միջոցառումների ներկայացում /տնօրեն, տնօրենի օգնական, գեղարվեստական մասի վարիչ, գրադարանավար, տնտեսվար, պահեստապետ/<br>4. 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության քննարկում<br>5. 2025թ. ֆինանսատնտեսական գոծունեության նախահաշվի քննարկում<br>6. Գնումների պլանի քննարկում | Հունվար 2025թ. | |
| 2. | 1. Իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում / գեղարվեստական մասի վարիչ, տնօրենի տեղակալ/<br>2. 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվության քննարկում<br>3. Գնումների գործընթացի վերլուծում<br>4. Ընթացիք հարցեր | Մարտ -ապրիլ 2025թ. | |
| 3. | 1. Իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում /գեղարվեստական մասի վարիչ, տնօրենի տեղակալ/<br>2. Ուսումնական ծրագրերը յուրացրած սաների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգման և հանձնաժողովներ ստեղծելու վերաբերյալ քննարկում<br>3. Կենտրոնի աշխատակիցներին հերթական արձակուրդ հատկացնելու վերաբերյալ քննարկում<br>4. 2024-2025 ուսումնական տարվա անփոփում՝ սաների կատարած աշխատանքների, ձեռք բերած գիտելիքների, հաշվետու ցուցահանդեսների, համերգների վերաբերյալ քննարկում<br>5. 2-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվության քննարկում | Հունիս-հուլիս 2025թ. | |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | 1. Նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներ<br>2. 2025 թվականի հունվար-օգոստոս ամիսների ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում /տնօրենի տեղակալներ, ավագ և կազմակերպիչ մանկավարժներ, գեղարվեստական մասի վարիչ, տնօրենի օգնական/<br>3. 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերի, թեմատիկ և դաստիարակչական, ուսումնական պլանների, աշխատանքային ժամանակացույցի, դասացուցակի և մանկավարժական խորհրդի աշխատանքային պլանի և կազմի վերաբերյալ քննարկումներ<br>4. Տարիֆիկացիայի և հաստիքացուցակի քննարկումներ | Օգոստոս 2025թ. | |
| 5. | 1. Ձմեռվա նախապատրաստական աշխատանքներ<br>6. Իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում /գեղարվեստական մասի վարիչ, տնօրենի տեղակալ/<br>2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն /տնօրենի տեղակալներ/<br>3. Կենտրոնում գույքագրում անցկացնելու մասին քննարկում<br>4. 2026թ. գնումների պլանի նախապատրաստում<br>5. 2026թ. կազմակերպվող միջոցառումների քննարկում<br>6. 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվության քննարկում | Հոկտեմբեր-Նոյեմբեր 2025թ. | |